

(Ք.ա. 221-207 թթ.): Հին Հայաստանում այս ամենի առաջին իրականացնողն Հանդիսացաւ Արտաշէս Ա-ը, որի անունն ու գործը, թուում էր, թէ առայժմ մնացել են ստուերում: Դա երեւի պայմանաւորուած էր Տիգրան Մեծի՝ միջազգային ասպարէզում ունեցած անսահման հեղինակութեամբ, որի հետեւանքով էլ Արտաշէսին առանձնայատուկ ուշադրութիւն էր յատկացուած, եւ նա ինչ-որ տեղ յայտնուել էր ստուերում:

Փաստորէն, ինչպէս պարզ երեւում է վերոյիշեալ շարադրանքից, շնորհիւ Խորենացու եւ անտիկ պատմագրութեան մի խումբ մատենագիրների, ընդհանուր առմամբ, մեզ բաւականին ծանօթ է Արտաշէսի ծաւալած գործունէութիւնը՝ սկսած 201 թուականից: Թէ ինչպիսին է եղել մինչ այդ պահը Արտաշէսի դերակատարութիւնը, մնում է անյայտ: Երեւի, ինչպէս այս (խօսքը պրոֆեսիոնալ բանակի ստեղծման մասին է), այնպէս էլ նրա ծաւալած եւ իրականացրած իմաստուն եւ հաւասարակշռուած քաղաքականութեան միւս բազմաթիւ քայլերի մասին յիշողութեան արդիւնքն էր նրա անուան շուրջ ժողովրդա-

կան վէպի՝ աւանդազրոյցի յօրինումը, որին արժանացել են միայն իր նման ամենաերեւելիները (Սարգոն I Աքքադացին կամ Հինը, Կիւրոս Մեծը, Հոտմուլտը...)⁴⁰:

Արտաշէսն իրաւամբ հին աշխարհում կառավարած արքաներից առաջինն էր, որ արդարացիօրէն վաստակեց Բարեպաշտ, հին յունարէն eusebes մականունը, իսկ նրա յուղարկաւորութիւնը վերածուեց համաժողովրդական սգի: Խորենացին գրում է. «... եւ զգահոյիւքն շուրջ՝ որդիքն եւ բազմութիւն ազգականացն, եւ առ այսօրքիւք պաշտօնէիցն զինուորութիւնք, եւ նահապետքն եւ նախարարութեանցն գունդք եւ միանգամայն զօրականացն վաշտք, ամենեքին կազմեալ զինու հանդերձ, իբր թէ ի պատերազմ ճակատիցին. եւ առաջի պղնձիս հարկանելով փողս, ...բազմութիւն ուսմկին»⁴¹: Ինչո՞վ է հետաքրքիր Պատմահօր այս վկայութիւնը. Արտաշէսին թաղել են այնպէս, ինչպէս վայել է ոչ միայն արքային, այլեւ բարձրաստիճան զինուորականին, քանզի թափորում մեծամասնութիւն են կազմել հէնց վերջիններս, եւ այն ուղեկցուել է զօրական նուագախմբի նուագակցութեամբ:

40 Տե՛ս Խորենացի, Բ, լէ. Ատե՛ն՝ Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. I, էջ 528-529 (հեղ. Գ. Խ. Սարգսեան):

41 Խորենացի, Բ, 4

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ II ԵՒ III ԴԱՐԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ԾՈՒՐՋ

Բարկէն Յարութիւնեան

Հայոց պատմութեան II եւ III դարերի ժամանակագրութիւնը հայագիտութեան առաւել կնճռոտ խնդիրների թուին է պատկանում, քանի որ սկզբնաղբիւրների կցկտուր տեղեկութիւնների պատճառով ամէն մի ուսումնասիրող իւրովի է մօտեցել դրա լուսարանմանը եւ տուել փաստօրէն այդ ժամանակագրութեան սեփական մեկնաբանութիւնը: Անշուշտ, մեր լուծումներն ու եզրակացութիւնները միշտ էլ, որ անվերապահօրէն ընդունելի կը լինեն հետազօտողների համար, սակայն մենք վստահ ենք, որ առկայ աղբիւրագիտական հիմքի պայմաններում դրանք մօտ են իրականութեանը, իսկ շատ դէպքերում պարզապէս բացայայտում են իրերի պատմական կացութիւնը:

Մեր քննութիւնը սկսում ենք II դարի վերջերից, երբ Մեծ Հայքում թագաւորեց Վաղարշ Բ թագաւորը: Պատմահայր Մովսէս Խորենացին նրա մասին գրում է. «Յետ մահուանն Տիգրանայ թագաւորէ Վաղարշ որդի նորին յերեսներորդի եւ երկրորդի ամի հոմանուանն իւրոյ Վաղարշայ Պարսից արքայի: Սա շինէ աւան մեծ գտեղի ծննդեան իւրոյ ի վերայ ճանապարհին. ուր ի գնալ մօր իւրոյ ի ձմերոց յԱյրարատ, յանկարծակի պատահեալ երկանց ի գնացսն՝ ծնաւ ի վերայ ճանապարհին, ի գաւառին Բասենոյ, ի տեղուջն, ուր խառնին Մուրց եւ Երասխ. զոր շինեաց յիւր անուն եւ կոչեաց Վաղարշաւան: Սա պատեաց պարսպաւ եւ զհօր աւանն Վարդգէսի, որ ի վերայ Քասախ գետոյ զորմէ յառասպելսն ասեն. «Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւառէն, զՔասաղ գետով, եկեալ նստաւ

զՇրէշ բլրով, զԱրտիմէդ քաղաքաւ, զՔասաղ գետով, կռել կոփել զդուռնն: Երուանդայ արքայի»: Այս երուանդ՝ առաջինն է, սակաւակեացն, որ ի Հայկազանց, զորոյ զքոյրն կին առեալ Վարդգէսի՝ շինեաց զաւանս զայս. յորում եւ Տիգրան միջին յԱրշակունեաց նստոյց զհասարակ առաջնոյ գերութեանն Հրէից. որ եղեւ քաղաքագիւղ վաճառօք: Այժմ այս Վաղարշ պատեաց պարսպաւ եւ հօր պատուարաւ, եւ անուանեաց Վաղարշապատ, որ եւ նոր քաղաք:

Սա թագաւորեալ ամս քսան, մեռաւ: Թէ լոկ եւ այլքն կեցին, բայց ասեմ զայս եւ յետ մահուանն կեալ, յաղագս բարի անուանն քան զթուլագոյնս ի թագաւորացն: Վասն զի ի սորա աւուրս միաբանեալ ամբոխութիւն հիւսիսականաց, զԽազրաց ասեմ եւ զԲասլաց, արտաքս քան զդուռն շորայ ելանեն, առաջնորդ եւ թագաւոր ունելով ինքեանց զՎնասեպ ոմն Սուրհապ. որք անցեալ վտարին այսր զԿուր գետով: Որոց պատահեալ Վաղարշ ամբոխիւ մեծաւ եւ արամբք մարտիօք՝ ցիր դիւթաւալ կացուցանէ զամբոխն ընդ երեսս դաշտին, եւ ձիգ զհետ եղեալ՝ անցանէ ընդ կապանն շորայ: Ուր միւսանգամ միաբանեալ թշնամեացն՝ յօրինեցին ճակատ. զորս թէպէտ եւ վանեալ քաջացն Հայոց՝ փախստականս առնէին, սակայն Վաղարշ մեռանի ի ձեռաց կորովեաց աղեղնաւորաց:

Եւ առնու զթագաւորութիւնն Խոսրով որդի նորին յերրորդ ամի Արտաւանայ Պարսից արքայի: Եւ նոյն հետայն միաբանեալ զզօրս Հայոց, անցանէ ընդ լեռանն մեծ, վրէժս պահանջելով զմահուանն հօրն.

եւ վանեալ սրով եւ գեղարդեամբ զհզօր ազգան գայնոսիկ, մի ի հարիւրոց յամենեցունց պիտանեացն առնու պատանդս. եւ զիւրոյ տէրութեանն նշանակ՝ արձան հաստատէ հելլէնացի գրով, որպէս զի յայտ լիցի ընդ հնագանդութեամբ լինել Հռոմայեցւոց»¹:

Հարկ է նշել, որ պատմաբանների համար գուցէ եւ շատ լաւ կը լինէր, որ Հայոց Պատմահայրն այդչափ խելօք չլինէր: Չկայ եւ ոչ մի փաստ ու իրադարձութիւն, որ նրա ուղեղի բովով անցած չլինի եւ նոր միայն մատուցուի ընթերցողին: Այդ իսկ պատճառով պատմական իրադարձութիւնների շարադրանքն իր վրայ կրում է նրա՝ որպէս ուսումնասիրողի կնիքը: Այս հաղորդման մէջ Մովսէս Խորենացին իրար է միահիւսել Հայոց Վաղարշ Ա եւ Վաղարշ Բ թագաւորներին վերաբերող տեղեկութիւնները, իրողութիւն, որ յատկանշական է նրա երկին: Յ. Մանանդեանը նկատել է այդ եւ նշել, որ յիշեալ վկայութիւնների մէջ անհաւաստի է, հարկաւ, որ իբր թէ Խորենացիի հայր Վաղարշն էր պատել պարսպով եւ հզօր պատուարով Արտիմէդ քաղաքը, որն իր անունով անուանել էր Վաղարշապատ²: Այսուհանդերձ, պէտք է խոստովանել, որ ճանաչուած հայագէտի կարծիքը, լինելով ճիշտ եւ շատ տրամաբանական, այնուամենայնիւ, բաւարար հիմնաւորուած չէ, որովհետեւ պարզաբանուած չէ, թէ ինչո՞ւ Պատմահայրը Վաղարշ Ա-ի գահակալութեան սկիզբը դնում է պարսից (իմա՝ պարթեւական - Բ. Յ.) Վաղարշ թագաւորի 32-րդ տարում: Պար-

թեւական թագաւորների ժամանակագրութիւնը մինչեւ այսօր էլ մինչեւ վերջ յատկեցուած չէ, սակայն գոյութիւն ունեցողները տալիս են Մովսէս Խորենացու տուեալներին հակասող պատկեր: Հասկանալի է, որ Հայոց Վաղարշ Ա-ի տարիները ոչ մի կերպ չեն կարող համընկնել պարթեւական Վաղարշ Ա-ի գահակալութեան շրջանի հետ, քանի որ վերջինս իշխել է 51/52-79/80 թթ. եւ այն էլ ընդամէնը 28 տարի: Սակայն Վաղարշ Բ պարթեւական թագաւորը, որի գահակալութիւնը սովորաբար դնում են 105/6-147 թթ., կարծես թէ նոյնպէս չի համընկնում Պատմահայր յիշեալ Վաղարշին:

Ենթադրել, թէ Խորենացու տեղեկութիւնը վերաբերում է, այնուամենայնիւ, Հայոց Վաղարշ Բ թագաւորին, նոյնպէս հնարաւոր չէ, որովհետեւ 45 տարի իշխած պարթեւական Վաղարշ Գ-ի շրջանը, որ տարիների քանակով կարծես թէ դժուարութիւն չի յարուցում, ոչ մի կերպ չի կարող համապատասխանել Հայոց Վաղարշ Բ-ի տարիներին: Ընդամէնը 16 կամ 17 տարի իշխած Վաղարշ Դ-ն կամ Վաղարշ Ե-ն ընդհանրապէս յարմար չեն³: Այսպէս թէ այնպէս, միակ հնարաւոր տարբերակը շարունակում է մնալ պարթեւական Վաղարշ Բ-ը, որի 32-րդ տարին նոյնպէս յայտնում է մի անհեթեթ ժամանակաշրջանում՝ 137/138 թթ., երբ համարեա թէ աւարտում են նրա գահակալութեան տարիները: Թւում է, թէ կանգնած ենք փակուղու առաջ, սակայն, այսուհանդերձ, կայ մի հանգամանք, որը, մեր կարծիքով, լոյս է սփռում խնդրիս վրայ:

Յայտնի է, որ Վաղարշ Բ-ն իր դրամները հատել է արդէն առաջին դարի 70-ական թթ. վերջից⁴ փաստօրէն Վաղարշ Ա-ի մահից անմիջապէս յետոյ: Յունահռո-

մէական աղբիւրների տուեալների համաձայն, ամենայն հաւանականութեամբ, 110 թ. մահացաւ Հայոց Սանատրուկ թագաւորը, որին 110-113 թուերին յաջորդեց Աշխադարը, իսկ 113-ին՝ Պարթամասիրը: Այսօր քաղաքացիութիւն ստացած ժամանակագրութեամբ, Սանատրուկի որդի Վաղարշն իշխեց 117-140/143 թթ.⁵: Եթէ 117 թ. յետ գնանք 32 տարի, ապա կը ստացուի 85 թ., որն ընդունելի տարբերակ չէ, քանի որ դա ոչ միայն հակասում է վերը բերուած տեղեկութեանը, այլեւ այն իրողութեանը, որ 78-115/116 թթ. Պարթեստանում իշխել է Բակուր Բ-ը⁶: Հարցը մտնում է փակուղի եւ մենք պէտք է ընդունենք, որ Պատմահայրը մեզ աղաւաղուած վկայութիւն է պահպանել: Սակայն բաւական է հարցը քննարկել մի փոքր այլ կտրուածքով, եւ, մեր կարծիքով, ամէն ինչ իր տեղը կ'ընկնի: Վաղարշ Ա-ը Հայոց Սանատրուկ թագաւորի որդին էր, ուստի միանգամայն բնական է ենթադրել, որ Մեծ Հայքում թագաւորող եւ ժառանգական իշխանութեան ձգտող Արշակունիների համար Վաղարշ Ա-ի իշխանութիւնն իրականում սկսուած էր համարուում ոչ թէ 116 կամ 117 թ., այլ 110 թ., երբ մահացաւ Սանատրուկը եւ տեսականօրէն նրան պէտք է յաջորդէր Վաղարշը: Ուստի, եթէ այժմ փորձենք յետ գնալ 32 տարով ոչ թէ 117, այլ 110 թ., ապա կը ստանանք 78 կամ 79 թ., երբուհանից էլ յայտնի են պարթեւական Վաղարշ Բ թագաւորի հատած դրամները: Աւելին՝ այս հանգամանքն իրաւունք է տալիս բացառելու պարթեւական թագաւոր Վաղարշ Ա-ի իշխանութիւնը մինչեւ 80 թ. հասցնելու միտքը: Իրերի բերումով այնպէս ստացուեց, որ Հայոց Վաղարշ Ա թագաւորն իշխանութեան գլուխ եկաւ ոչ թէ 116 կամ 117 թ., այլ 110 թ., իսկ պարթեւական Վա-

ղարշ Բ-ը՝ միայն 11 դարի 20-ական թթ. վերջին կամ էլ, համաձայն այլ հաշուարկների, 105/106 թթ.: Հայ իրականութեան համար, եթէ դատելու լինենք Պատմահայր երկից, Աշխադարի կամ Պարթամասիրի գահակալութիւնն օրինական էլ չէր, ուստի եւ նրանք տեղ չեն գտել Մովսէս Խորենացու շարադրանքի մէջ: Ինչ վերաբերում է պարթեւական Վաղարշ Բ-ին, ապա նա էլ գործնական իշխանութեան գալով իր գահակալութեան սկիզբը համարելու էր դրամները հատելու պահից, իսկ դա ընկնում էր, ինչպէս նշեցինք, 78 կամ 79 թ.: Ասուածից բխում է նաեւ այն, որ ամէն մի հնարաւոր առիթով Մեծ Հայքում իշխող Արշակունիները փորձում էին ժառանգական դարձնել իրենց իշխանութիւնը՝ անգամ Պարթեստանում իշխող Արշակունիներին հակադրուելու գնով:

Շարունակելով Պատմահայր վերը բերուած հաղորդման քննութիւնը՝ պարտաւոր ենք արձանագրել, որ դրա երկրորդ կէտը վերաբերում է արդէն Հայոց Վաղարշ Բ-ի գահակալութեանը: Յ. Մանանդեանն իրաւացի է, գտնելով, որ Արտիմէդ քաղաքը կամ Վարդգէսուանը պարսպապատուել էր արդէն Վաղարշ Ա-ի օրօք, 164 թ. հռչակուել էր Մեծ Հայքի թագաւորութեան մայրաքաղաք, ուստի Վաղարշ Բ-ի ժամանակներում պէտք է լինէր պարսպաներ ու պատուար ունեցող քաղաք: Հեղինակը հաւաստի եւ ճիշտ է համարում հիւսիսականների արշաւանքը Հայաստան, Վաղարշի սպանութիւնը, ինչպէս նաեւ Խորենացիի վրէժխնդրութիւնն ու յունարէն լեզուով արձանագրութիւն թողնելը⁷: Ինչպէս մնացած դէպքերում, այնպէս էլ այս առնչութեամբ Խորենացին իւրովի է մեկնաբանում Բարդաթանի հաղորդած տեղեկութիւնները, եւ ինչպէս ճիշտ ընդգծում է Յ. Մանանդեանը, խաղիւրների եւ բասիլիս-

1 Մովսէս Խորենացի, գիրք Բ, գլ. 4Ե
 2 Я. А. Манандян, О торговле и городах Армении, Ереван, 1980, էջ 91-94. տե՛ս նաեւ J. Markwart, Untersuchungen zur Geschichte von Erän, II, Leipzig, 1905; տե՛ս "Philologus", Supplementband, Heft I, էջ 227: Հ. Յ. Աստուրեան, Քաղաքական վերաբերություններ ընդ մէջ Հայաստանի եւ Հռովմայ 190-էն Գ.Ք. մինչեւ 428 յ.Ք., Վեներտիկ-Ս. Ղազար, 1912, էջ 214:

5 Յ. Մանանդեան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հտ. Բ, մասն Ա, էջ 35:
 6 А. Г. Бокщанин, Парфия и Рим, часть II, էջ 302:

7 Յ. Մանանդեան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հտ. Բ, մասն Ա, էջ 57:

3 А. Г. Бокщанин, Парфия и Рим, часть II, Москва, 1966, стр. 302
 4 Անդ, էջ 259-260

րի Հայաստան ներխուժելու հանգամանքն աւելի շուտ նրա ենթադրութիւնն է⁸:

Իսկ ե՞րբ է եղել հիւսիսականների արշաւանքը: Սովորաբար այն ենթադրում են 196 կամ 198 թ. եւ գտնում, որ արշաւողները եղել են ալանները⁹: Այս խնդիրը, որ մեր հետազայ քննութեան համար մեծ կարեւորութիւն է ներկայացնում, արժանի է արմատական լուսաբանութեան: Հարցն այն է, որ պատմագիտական գրականութեան մէջ ընդունուած է II դարի վերջին եւ III դարի սկզբին դնել խոսքով Ա-ի գահակալութիւնը, որին 216 թ. յաջորդել է Տրդատ Բ-ը: Մովսէս Խորենացու պատմութիւնից բխում է, որ Վաղարշ Բ-ն իշխել է քսան տարի եւ սպանուել է ոմն Վնասեպ Սուրհայի կողմից հիւսիսականների դէպի Մեծ Հայք կազմակերպած արշաւանքի ժամանակ, իսկ նրան յաջորդած խոսքով անունով որդին գահ է բարձրացել պարթեւական Արտաւան թագաւորի երրորդ տարում: Յիշատակութեան Արտաւանը պարթեւական Արտաւան է թագաւորն է, որն, ըստ «Հայ ժողովրդի պատմութեան» ակադեմիական հրատարակութեան հեղինակների, թագաւորել է Վաղարշ Ե-ի հինգերորդ տարում¹⁰, այսինքն՝ 213 թ.: Հետեւաբար, եթէ Արտաւան Ե-ը իրօք գահ է բարձրացել 213 թ., ապա Պատմահօր համաձայն խոսքովը գահ է բարձրացել 215 կամ 216 թ.: Եւ, եթէ իսկ չհաւատալու առանձին պատճառներ, կարծես թէ, չկան, Վաղարշ Ե-ն իշխել է 20 տարի, ապա առաջին հնարաւոր եզրակացութիւնն այն է, որ նրա գահակալութիւնը պէտք է սկսուէր 195 կամ 196 թ.: Յունահռոմէական

սկզբնաղբիւրների տուեալներից դատելով, Մեծ Հայքում 216 թ., կարծես թէ, թագաւորում է Տրդատ Բ-ը, ուստի ուսումնասիրողներն այս կնիւնը լուծելու համար Վաղարշ Բ-ի իշխանութիւնը դնում են 185-198 թթ., իսկ նրա որդի խոսքով Ա-ի գահակալութիւնը՝ 198-216 թթ., որը, մեր կարծիքով, պարզապէս հակասում է Պատմահօր հաղորդումներին:

Հիմք ունենալով Պատմահօր հաղորդումները, Յ. Մանանդեանը գտնում է, որ խոսքով Ա-ի գահակալութիւնը միանգամայն անտարակուսելի է Սեպտիմիոս Սեւերոս (193-211) եւ նրա որդի Անտոնինոս Կարակալայ (211-217) կայսրերի օրօք¹¹: Արդ, տեսնենք, թէ հնարաւոր է արդեօք նման եզրակացութիւնը: Խորենացին գրում է. «Գրէ զբազումս վկայեալս եւ ի խոսքովայ, ի մերում աշխարհիս, համայն եւ յետ նորա օտարք յօտարաց: Բայց զի ոչ ճշմարտութեամբ եւ ոճով պատմէ, եւ ոչ զանուանսն նշանակէ կամ զտեղիս կատարմանցն՝ ոչ ինչ կարեւորագոյն համարեցաք երկրորդել: Նոյնպէս եւ զԱնտոնինէ որդւոյ Սեւերոսայ ասէ՝ պատերազմեալ ընդ Վաղարշայ Պարսից արքայի ի Միջագետս, եւ մեռանել ի մէջ Եդեսիայ եւ Խառնու, եւ մերոյն խոսքովու ոչ յոք հակամիտեալ»¹²: Դժուար է տեսնել, որ Պատմահայրը խոսքովին համարում է միայն Անտոնինոս Կարակալայի ժամանակակիցը, բայց ոչ մի նշում չկայ, թէ նա կարող էր թագաւորել Սեպտիմիոս Սեւերոսի իշխանութեան շրջանում: Հետեւաբար խոսքովի գահակալութիւնը ոչ մի կերպ չի կարելի դնել 211 թ. առաջ: Ընդհակառակը՝ ամէն ինչ վկայում է այն բանի օգտին, որ Սեպտիմիոս Սեւերոսի ժամանակակիցը Վաղարշ Բ-ն է:

11 Յ. Մանանդեան, *Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան*, հտ. Բ, մասն Ա, էջ 58-59:
12 Մովսէս Խորենացի, գիրք Բ, գլ. 26

8 Աճա.
9 Г. Халатьянц, *Армянские Аршакиды в истории Армении* Мусея Хоренского, М., 1896, էջ 318. J. Marquart, *Erānšahr nach der Geographie des Ps Moses Chorenaci*, Berlin, 1901, էջ 102, ծնթ. 4
10 Հայ ժողովրդի պատմութիւն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հտ. Բ, էջ 22 (այսուհետեւ՝ առանց հրատարակութեան նշման):

Արդ, պարզելով այս իրողութիւնը, ինչպէ՞ս կատարել քննութիւնը եւ ո՞ր տարեթիւնը դնել հաշուարկների հիմքում: Յայտնի է, որ Սեպտիմիոս Սեւերոսին կայսերական գահին յաջորդած Անտոնինոս Կարակալան իշխել է 211-217 թթ.: Ձեռք բերելով զինուորների շրջանում մեծ հեղինակութիւն եւ երազելով կրկնել իր սիրած հերոս Ալեքսանդր Մակեդոնացու սխրանքները՝ նա 215 թ. մեծ բանակով գալիս է Անտիոք եւ փորձում, պատրուակելով Վաղարշ Ե-ի հօրեղբայր Տրդատ Արշակունու ու կրիկեցի փրկիսոփայ Անտիոքոսի իրեն դաւաճանելն ու Վաղարշ Ե-ի մօտ ապաստանելը, յարձակուել Պարթեւական թագաւորութեան վրայ: Սակայն գործը պատերազմի չհասաւ, որովհետեւ, ստիպուած լինելով պայքարել իր դէմ ապստամբած եղբոր՝ Արտաւան Ե-ի դէմ, Վաղարշ Ե-ը խուսափեց պատերազմից՝ յիշեալ անձանց յանձնելով Կարակալային: Հայագիտութեան մէջ քաղաքացիութիւն է ստացել այն կարծիքը, թէ 216 թ. նա խարդախ միջոցներով աշխատեց կայսրութեանը միացնել Օսրոյէնէ-Եդեսիայի եւ Մեծ Հայքի թագաւորութիւնները՝ վերածելով դրանք հռոմէական պրովինցիաների: Անտիոք հրաւիրուած Օսրոյէնէի թագաւոր Արգար Ժ-ն ձերբակալուեց եւ ուղարկուեց Հռոմ, իսկ նրա թագաւորութեանը տիրեց Կարակալան: Ուխտադրուծ կերպով ձերբակալուեց նաեւ հայոց թագաւորը: Այդ դէպքերի կապակցութեամբ Դիոն Կասիոսը յայտնում է. «Արդ՝ [Կարակալան] խաբելով Օսրոյէնէի Արգարոս թագաւորին, համոզեց նրան իբրեւ բարեկամի գալ իր մօտ, որից յետոյ նրան ձերբակալելով կալանաւորեց եւ այսպիսով Օսրոյէնէն, որ մնացել էր առանց թագաւորի, Հպատակեցուեց»:

Իսկ հայոց թագաւորին, որը վէճի մէջ էր իր որդիների հետ, բարեկամական նամակներով նոյնպէս կանչեց, իբր նրանց հաշտեցնելու պատրուակով, բայց սրանց հետ եւս վարուեց այնպէս, ինչպէս Արգար-

ոսի հետ: Սակայն հայերը չհանդուրժեցին նրան, այլ դիմեցին զէնքի, ու այլեւս նրանցից ոչ ոք երբեւիցէ ոչ մի բանում նրան չէր հաւատում, այնպէս որ նա գործով սովորեց, թէ որքան վնասաբեր է կայսեր համար խաբէութեամբ վերաբերուել բարեկամին»¹³: Աւելին՝ պարզուած է, որ հայոց թագաւորին եւ նրա որդիներին ձերբակալուեց յետոյ, Կարակալայի կողմից հայերի դէմ ուղարկուած Թէոկրիտոս զօրավարը նրանցից դաժանօրէն պարտութիւն կրեց¹⁴:

Դէպքերը զարգանում էին զարմանալի արագութեամբ: Զգտելով ամէն կերպ պատերազմ սանձազերծել Պարթեւական պետութեան դէմ՝ նա Տիգրանին տիրացած Արտաւան Ե-ից խնդրեց նրա դստեր ձեռքը՝ հեռահար նպատակ ունենալով այդ ճանապարհով դառնալ պարթեւական գահի ժառանգորդ եւ տիրել Առաջաւոր Ասիայի այդ հզօր տէրութեանը¹⁵, իսկ մերժման դէպքում պատրուակ ունենալ պարթեւների վրայ յարձակուելու համար: Հասկանալի է, որ Կարակալայի ծրագրերը բոլորովին էլ գաղտնիք չէին պարթեւների համար, ուստի մերժումը չյապաղեց: Իր հերթին հռոմէական կայսրն էլ պատերազմ յայտարարեց, արշաւեց Պարթեւական թագաւորութիւն ու գրաւեց Ադիաբէնէի Արբելա քաղաքը՝ աւերելով թագաւորական հանգստարանները եւ ցաք ու ցրիւ տալով արքաների աճիւնները¹⁶: Սակայն հռոմէապարթեւական պատերազմ, այնուամենայնիւ, կրկին չստացուեց, որովհետեւ պարթեւներն առանց դիմադրութեան պարզապէս նահանջեցին եւ սկսեցին ուժեր կու-

13 Յովսէպոս Փլաւիոս, *Դիոն Կասիոս*, թարգմ. բնագրից, առաջ. եւ ծնթ. Ս. Մ. Կրկնաշարեանի, Երեւան, 1976, գիրք LXXVII, 1-3, էջ 221
14 Աճա, LXXVII, 21,1
15 Աճա, LXXVIII, 1,1
16 Յ. Մանանդեան, *Քննական տեսութիւն...*, հտ. Բ, մասն Ա, էջ 61

տակել առաջիկայ պատերազմական գործողութիւնների համար: Մօտալուտ ձմեռը կայսրին ստիպեց վերադառնալ Եդեսիա, որտեղ ձմեռելուց յետոյ նա 217 թ. գարնանը կրկին արշաւեց պարթեւների դէմ, սակայն ապրիլի 8-ին սպանուեց իր իսկ զինուորականների ձեռքով¹⁷:

Օսրոյէնէի ե՛ւ Հայոց թագաւորների ձերբակալութիւնը, ինչպէս դժուար է է եզրակացնել «Հայ ժողովրդի պատմութեան» ակադեմիական հրատարակութեան շարադրանքից, տեղի է ունեցել 216 թ.: Այդ դէպքում Վաղարշ Բ-ի սպանութիւնը հիւսիսականների կողմից կարելի է դնել 215 թ., քանի որ, ըստ Պատմահօր խօսքերի, Խոսրովը գահ բարձրացաւ Արտաւան Ե-ի իշխանութեան երրորդ տարում: Ըստ այդմ էլ՝ ելնելով պատմիչի տեղեկութիւններից՝ պէտք է եզրակացնել, որ նոյն 215 թ. Խոսրովն արշաւեց հիւսիսականների դէմ, վրէժ լուծեց իր հօր սպանութեան համար՝ պատանդ վերցնելով նրանց իւրաքանչիւր հարիւր մեծամեծներից մէկին եւ թողնելով արձանագրութիւն յունարէն լեզուով: Հասկանալի է, որ այս մօտեցման դէպքում Վաղարշ Բ-ը կարող էր գահակալել 195 կամ 196 թ., սակայն այդ, ինչպէս շուտով կը համոզուենք, ծնում է հակասութիւններ, որոնք բացատրութիւն չեն ստանում մեզ հասած տեղեկութիւնների լոյսով: Խնդիրն այն է, որ այս բոլոր հաշուարկները կատարուած են Արտաւան Ե-ի 213 թ. գահ բարձրանալու հիմքի վրայ: Աւելին՝ այդ իրողութիւնն իր հերթին յարմարեցուած է Կարակալայի 216 թ. արշաւանքին: Արտաւան Ե-ի գահակալութեան տարեթիւն, ըստ էութեան, մինչեւ օրս էլ մնում է անորոշ, այնպէս որ այն նոյն յաջողութեամբ կարող է լինել 208-ը, 209-ը կամ էլ, ասենք, 210 թ.: Յամենայն դէպս,

17 Aeli Spartiani, Antoninus Caracallus, 6,6: Scriptores historiae Augustae, ed. E. Hohl, vol. 1, Lipsiae, 1927, էջ 188:

Ն. Ս. Դեբեվոլայզը Արտաւան Ե-ի գահակալութիւնը դնում է 209 թ.¹⁸: Այդ դէպքում Խոսրովի գահակալութիւնը կարող է ընկնել 211 կամ 212 թ., իսկ Վաղարշ Բ-ինը՝ 191-192 թթ.: Ըստ այդմ էլ՝ հիւսիսականների արշաւանքը կարող էր տեղի ունենալ 211 կամ 212 թուերին, սակայն առաւել հաւանականն այն է, որ այդ տեղի ունեցաւ 211-ին, որին նոյն տարում հետեւեց Խոսրով թագաւորի պատժիչ արշաւանքը: Այս մօտեցման դէպքում, որի շարժառիթներն ստորեւ կը բացատրուեն եւ հասկանալի կը դառնան, Վաղարշ Բ-ի քսանամեայ գահակալութիւնն ընկնում է 191-211 թթ.: Հասկանալի է, որ Վաղարշ Բ-ի 191-211 թթ. իշխելու դէպքում, տեղ չի մնում ուսումնասիրողների կողմից ստեղծուած Խոսրով Ա թագաւորի համար: Այս ժամանակամիջոցը բանական է նաեւ այն առումով, որ Սեպտիմիոս Սեւերոսի կայսերական գահ բարձրանալու ժամանակ Մեծ Հայքում իրօք թագաւորում էր Վաղարշ Բ-ը: Սակայն Պատմահօր երկի ժամանակագրութիւնը ծնում է նոր խնդիրներ: Այսպէս, Մովսէս Խորենացու հաղորդման համաձայն, Վաղարշ Բ-ն եղել է Տիգրանի որդին, իսկ յիշեալ Տիգրանը կամ Տիգրան Վերջինը թագաւորել է պարսից Պերոզ թագաւորի 24-րդ տարում՝ իշխելով 42 տարի: Հետագայ տեղեկութիւններից պարզուում է, որ Տիգրան Վերջինը կալանաւորուում է մի յոյն աղջկանից այն ժամանակ, երբ վախճանուեց Հռոմէացիների Տիտոս Բ կայսրը, որը կոչուեց Անտոնինոս Աւգուստոս, եւ պարսից Պերոզ թագաւորն էլ արշաւեց Հռոմէացիների դէմ՝ ստանալով յաղթական կռիւների պատճառով Պերոզ կամ Յաղթող մականունը, չնայած նա մինչ այդ յունարէնով անուանուել է Վա-

18 N. C. Debevoise, A political History of Parthia, Chicago, 1938; Parker K. and Dubbarstein W., Babilonian Chronology..., Providence, 1956: Տե՛ս նաև "СМЭ", հտ. 1, էջ 886:

ղեգեսոս¹⁹: Աւելի որոշակիացնելով Տիգրան Վերջինի գահակալութեան վերջին տարուայ իրողութիւնները, Պատմահայրը գրում է. «Արդ՝ յասպատակելն Պերոզի ընդ Ասորիս ի կողմանս Պաղեստինացոց, վասն նորա եւ հրամանաւ նորին՝ եւ մերն Տիգրան ի Միջերկրեայս ասպատակեալ եւ ի կալանս ըմբռնեալ յաղջկանէ միոջէ իշխելոյ կողմանցն այնոցիկ, մինչ դեռ Ղուկիանոս կեսար յԱթէնս զմեհեանն շինէրորոյ եւ անցեալ զօրօք բազմօք ի Միջերկրեայսն յետ մեռանելոյն Պերոզի նուաճեաց զՀայս, եւ արձակեաց զՏիգրան: Ետ զՌոմիի զկոյս, զմերձաւոր իւր, նմա կնութեան, զոր եկեալ ի Հայս ի բաց թողու, եւ զլեալ ի նմանէ պատանիս չորս՝ ազգ սերէ յանուն մօրն իւրեանց Ռոմիայ՝ Ռոմիսեան. եւ զառաջին մանկանցն՝ զլուիս նահապետ կացուցանէ. եւ կարգէ ընդ այլ նախարարութիւնս, զի մի անուանեսցին Արշակունիք»²⁰: Ինչպէս պարզ է դառնում, Ղուկիանոսը Պերոզի մեռնելուց յետոյ մեծ զօրքով զալիս է Միջերկրեայք, նուաճում է Հայաստանը եւ ազատ արձակում Տիգրանին, նրան կին տալով Ռոմիի անուկով իր ազգական կոյսին, որին Հայոց թագաւորն արձակում է իր մօտից, իսկ նրանից ծնուած չորս պատանիներին վերածում է նախարարական տոհմի՝ Ռոմիի անուկով Ռոմիսեանք կոչելով, որպէսզի նրանք Արշակունի չկոչուեն: Պատանիներից աւագն ստանում է նահապետութիւնը: Ուսումնասիրողները վաղուց ցոյց են տուել, որ Տիտոս Բ-ը Տիտոս Անտոնինոսն է կամ Բարեպաշտ կոչուածը, որ թագաւորել է 138-161 թթ., իսկ պարթեւների Պերոզ մականունեալ թագաւորը, որին յոյները Վաղեգեսոս էին կոչում²¹, պարթեւական Վաղարշ Բ-ն է, որի գահակալութիւնը Ստ. Մալխա-

19 Մովսէս Խորենացի, գիրք Բ, գլ. ԿԴ
20 Աճռ
21 Աճռ

սեանցը դնում է 121-148 թթ.²², իսկ Գէորգ (Ջորջ) Ռոուլինսոնը՝ 130-148/149 թթ.²³: Ղուկիանոս կեսարն Անտոնինոսի որդեգրած Վերոսի որդին է, որը գահ է բարձրացել Մարկոս Աւրելիոսի հետ 161 թ.²⁴: Մենք արդէն նշել ենք, որ Ա. Բոկչչանինը Վաղարշ Բ-ի իշխանութիւնը հաշուում է II դարի 20-ական թթ. վերջից, սակայն արդէն 78 թ., չունենալով արքայից արքայի կարգավիճակ, նա համարել է իրեն թագաւոր: Սակայն մեր պարագայում դա բնաւ էլ էական չէ: Կարեւորն այն է, որ Վաղարշ Բ-ը կամ Պերոզը թագաւորել է մինչեւ 147 կամ 148/149 թիւը:

Արդ, ինչ եզրակացութիւնների կարելի է գալ Պատմահօր այս վերին աստիճանի խճողուած հաղորդումից: Ամէնից առաջ պէտք է ընդունել Հայկական գահի վրայ Սոհեմոս-Տիգրանից առաջ եւս մէկ Տիգրանի գահակալութիւնը: Ուսումնասիրողները, ինչպէս վերը նշել ենք, Վաղարշ Ա-ի գահակալութիւնը դնում են 140-ից մինչեւ 143 թ., քանի որ այդ ժամանակահատուածում Մեծ Հայքում նոր թագաւոր նշանակելու մասին են հաւաստում Անտոնինոս Պիոսի հատած դրամները, որոնց մի կողմում դրոշմուած է կայսեր գլուխը, որի շուրջը գրուած է «Անտոնինոս կոնսուլ երրորդ անգամ Օգոստոս» (Antoninus Cos. III. Augustus), իսկ միւս կողմում՝ կայսերական ծիրանի հագած Պիոսը պսակ է դնում Հայոց թագաւորի գլխին եւ շուրջը գրուած է՝ «Տրուեց թագաւոր Հայերին հրամանով Մերակոյտի» (Rex Armeniis datus S.C.)²⁵: Ինչպէս եւ պէտք էր սպասել,

22 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, թարգմ., Գերաժ. Ե. ԾճԹ. Ստ. Մալխասեանցի, Երևան, 1968, էջ 354
23 G. Raulinson, Parthia, New York, 1893, էջ 316-321
24 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, հրատ. Ստ. Մալխասեանցի, էջ 354
25 Հ. Յ. Գաթրճեան, Տիգրեական պատմութիւն, հտ. Բ, Վիեննա, 1852, էջ 174, ծճԹ. 6. Ա. Գաթրա-

պատմաբաններից ոմանք ենթադրել են, որ Անտոնինոս Պիոսը նոր թագաւոր էր տուել Մեծ Հայքին Վաղարշ Ա-ի մահուան պատճառով²⁶: Հ. Աստուրեանը եկել է միանգամայն այլ եզրակացութեան: Նրա կարծիքով, Հաղարշանոսին կայսերական գահին փոխարինած Անտոնինոս Պիոսը, հաւանաբար Վիրքի թագաւոր Փարասման Բ-ի բանսարկութեամբ, թշնամաբար է տրամադրուել Վաղարշ Ա-ի նկատմամբ եւ մեզ անյայտ պատճառով նրան գահընկէց է արել²⁷: Արտայայտուելով այս հարցի առնչութեամբ՝ Յ. Մանանդեանը Հ. Աստուրեանի կուսուածները համարել է հնարաւոր, սակայն ոչ հաստատուն, քանի ղեռայդ չի ապացուցուել նոր ու համոզիչ փաստերով²⁸: Շարունակելով իր միտքը՝ նա գտնում է, որ Վաղարշ Ա-ին, հաւանաբար յաջորդել էր Սոհեմոսը (140/3-161), որը եմեսայի (այժմ՝ Հոմս - Բ. Յ.) իշխանական տոհմից էր եւ, ըստ երեւոյթին, իր երակների մէջ ունէր Արշակունեաց արիւն ու ազգական էր նաեւ Կոմագէնէի թագաւորներին, որոնք իրենց վերագրում էին Աքեմենեան ծագում: Սոհեմոսը միաժամանակ հռոմէական քաղաքացի էր եւ ծերակոյտի, այսինքն՝ Սենատի անդամ²⁹: Փոտպատրիարքի Bibliotheca-ի մէջ Սոհեմոսի կապակցութեամբ ասուած է, որ «Իր (Եամբլիկոսի - Բ. Յ.) մասին մատենագիրն ասում է, որ բարեյոնացի էր... եւ ծաղկում էր Աքեմենեան Արշակունեան Սոհեմոսի ժամանակ, որը թագաւոր էր եւ յաջորդել

էր իր նախնիքներին, որոնք նոյնպէս եղել էին թագաւորներ: Բայց նա նաեւ Հռոմի Ծերակոյտի անդամ եղաւ ու նաեւ հիւպատոս եւ յետոյ կրկին անգամ դառաւ թագաւոր Մեծ Հայաստանի: Արդ՝ ինքը ծաղկում էր, ինչպէս ասում է նա, հէնց սրա օրով: Իսկ Հռոմայեցուոց թագաւորութիւնը ժառանգեց Անտոնինոսը»³⁰:

Այսպիսի յստակ տեղեկութիւնից, անշուշտ, դժուար չէ հետեւցնել, ինչպէս կատարում են Գ. Խալաթեանը, Յ. Մարքոնարթը, Հ. Աստուրեանը եւ Յ. Մանանդեանը, որ Սոհեմոսը թագաւորել է Մեծ Հայքում երկու անգամ. ըստ որում, նրանց կարծիքով, առաջին անգամ 140-143 թթ. միջոցին Անտոնինոս Պիոսի ձեռքով, իսկ երկրորդ անգամ Աւրելիոս Անտոնինոսի կարգադրութեամբ 164 թ.³¹: Միանգամայն կիսելով անուանի հայագէտների տեսակետը Սոհեմոսի Մեծ Հայքում երկու անգամ թագաւորելու վերաբերեալ, մենք, այնուամենայնիւ, գտնում ենք, որ Սոհեմոսը 140-143 թթ. միջոցին չէր կարող Հայաստանում գահ բարձրանալ: Անշուշտ, իրաւունք ունեն այն ուսումնասիրողները, որոնց կարծիքով Սոհեմոսը նոյնանում է Տիգրան Վերջինին, սակայն մի բան պարզ է, որ Սոհեմոսը հազիւ թէ Պերոզի հրամանով ասպատակէր Միջերկրայեքը եւ ընդհանրապէս հանդէս գար պարթեւական դրածոյի դերում: Ամէն ինչ յուշում է այն մասին, որ Սոհեմոսը հայոց թագաւոր էր կարգուել առանց պարթեւական արքունիքի համաձայնութեան, որը Հռոմէայի (Իմա՝ Եռանդի - Բ. Յ.) պայմանագրի կոպիտ խախտում էր: Ինչ վերաբերում է Պատմահօր Տիգրան Վերջինին, ապա, ամէն ինչից դատելով, նրա խորենացիական կերպարն

գաշեան, *Քննական պատմութիւն Հայոց*, հտ. Բ, Թիֆլիս, 1895, էջ 259-260 եւ այլք

26 Jos. Sandalagian, *Histoire documentaire de l' Arménie*, t. II, Rome, 1917, էջ 551; Յ. Տաշեան, *Արշակունի դրամներ*, Վիեննա, 1919, էջ 126 եւ այլք

27 Հ. Աստուրեան, *Քաղաքական վերաբերութիւններ...*, էջ 214

28 Յ. Մանանդեան, *Քննական տեսութիւն...*, հտ. Բ, մասն Ա, էջ 38

29 Աճ

30 Jos. Sandalagian, *Histoire documentaire de l' Arménie*, t. II, Rome, 1917, էջ 552. տե՛ս Photitii Bibliotheca, 94:

31 Յ. Մանանդեան, *Քննական տեսութիւն...*, հտ. Բ, մասն Ա, էջ 39

իր մէջ միաւորում է առնուազն երեք անձի, որոնց գործունէութիւնը շատ հակասական եւ ինչ-որ տեղ խառնափնթոր միահիւսուած է Պատմահօր կողմից: Պատմիչի խօսքերով, նա թագաւորել է պարթեւական (Խորենացու մօտ՝ պարսից - Բ. Յ.) Պերոզ թագաւորի 24-րդ տարում, այնուհետեւ պարթեւների կողմում մասնակցում է դէպի Միջերկրայեք կատարուած արշաւանքին եւ գերի ընկնում տեղի իշխանաւոր մի յոյն աղջկայ ձեռքը, սակայն Ղուկիանոս Կեսարի արշաւանքի ժամանակ, երբ Հայաստանը նուաճուած է, նա Կեսարի կողմից ազատուած է բանտարկութիւնից: Միակ հնարաւոր բացատրութիւնն այն է, որ Տիգրան Վերջինի կերպարի մէջ թաքնուած է մէկ այլ Տիգրան եւս, որն ապրել է Տիտոս Բ-ի կամ Անտոնինոս Պիոսի (138-161) օրօք, որը հայոց Պատմահօր հաղորդմամբ, Պերոզ Վաղարշի, տուեալ դէպքում պարթեւական Վաղարշ Բ-ի դաշնակիցն էր, որը վերջինիս Ասորիքի վրայով Պաղեստինացուոց կողմերը կատարած արշաւանքի ժամանակ ասպատակեց Միջերկրայեքը եւ կալանաւորուեց այդ կողմերի իշխող մի յոյն աղջկանից: Ամէն ինչից դատելով, այս տեղեկութիւնն էլ միահիւսումն է երկու տարբեր ժամանակների իրադարձութիւնների, որովհետեւ Անտոնինոս Պիոսի ժամանակ Պարթեւական պետութիւնը մեծ մասամբ կրաւորական դիրք էր զբաւել եւ խուսափում էր Հռոմի հետ հակամարտութիւնից: Եղած տուեալները յուշում են, որ Վաղարշ Ա հայոց թագաւորը, հակառակ Հ. Աստուրեանի կարծիքի, մահացել էր բնական մահով եւ Անտոնինոս Պիոս կայսրը հայոց գահը յանձնել էր մի ինչ-որ Տիգրանի, հաւանաբար, Արշակունիների տոհմից:

Հնարաւոր տարբերակ է, որ յիշեալ Տիգրանը եղել է անգամ Վաղարշ Ա-ի որդին, չնայած հակառակը ոչ միայն չի բացառուում, այլեւ գուցէ եւ աւելի հաւանական է: Անկախ այն հանգամանքից, թէ

հայոց թագաւոր Հռչակուած Տիգրանը Վաղարշ Ա-ի որդին էր, թէ սովորական Արշակունի, այդ կատարուեց ոչ միայն առանց պարթեւների կողմից թեկնածութիւն առաջադրելու, այլեւ առանց նրանց համաձայնութեան, որն ի հարկէ Հռոմէայի (Եռանդի) պայմանագրի եւս մէկ կոպիտ խախտում էր: Յամենայն դէպս, այդպիսի եզրակացութեան կարելի է գալ կայսեր դրամների արձանագրութեան բովանդակութիւնից: Վերոյիշեալ Տիգրանն, այսպիսով, գահ բարձրացաւ, անտարակոյս, 140-143 թթ. միջոցին: Մենք հակուած ենք կարծելու, որ որքան էլ եղածը անպատուաբեր էր պարթեւների համար, նրանք, այնուամենայնիւ, դառը դեղահարը կուտուեցին՝ բաւարարուելով թերեւս այն իրողութեամբ, որ, այսպէս թէ այնպէս, հայոց գահին հաստատուել է Արշակունեաց տոհմի ներկայացուցիչ: Սակայն, ինչպէս հաղորդում է Յուլիոս Կապիտոլինոսը, պարթեւներն սկսեցին նախապատրաստուել պատերազմի՝ նպատակ ունենալով գրաւել Մեծ Հայքի թագաւորութիւնը: Գործը պատերազմի չհասաւ, որովհետեւ հռոմէական կայսրը կարողացաւ Վաղարշ Բ-ին նամակներով յետ պահել բացայայտ հակամարտութիւնից³²: Այս տեղեկութիւնն ինչ-որ մի տեղ զարմանալի է, որովհետեւ պարթեւների ուժն այնպիսին չէր, որ նրանք, առանց ծայրայեղ անհրաժեշտութեան, ձգտէին պատերազմ սկսել: Հայոց Պատմահօր վերը բերուած հաղորդումից դժուար չէ տեսնել, որ հայոց թագաւորի եւ պարթեւական արքայից արքայի միջեւ սերտ բարեկամութիւն է հաստատուում, որը հազիւ թէ վրիպէր հռոմէացիների ուշադրութիւնից: Նրանք՝ յանձին Անտոնինոս Պիոսի, գահընկէց արեցին Տիգրանին եւ գահ բարձրացրեցին Սոհեմոս-Տիգրանին, հաւանաբար Վաղարշ Բ-ի իշ-

32 Vita Antonini Pii, St'u Scriptores historiae Augustae, I, IX, 6:

խանութեան վերջին տարում՝ 148 թ.: Եւ պարթեւները, որ մի կերպ հաշտուել էին Տիգրանի՝ առանց իրենց համաձայնութեան հայոց թագաւոր հռչակելու հետ, ոչ մի կերպ չէին կարող համակերպուել Սոհեմոս-Տիգրանի գահակալութեանը Մեծ Հայքում, որով իրենց հիւսիս-արեւմտեան հարեւանը՝ Մեծ Հայքի ընդարձակ թագաւորութիւնն, ամբողջութեամբ յայտնուում էր Հռոմի քաղաքական իշխանութեան ուղորտում: Այսուհանդերձ, սառը բանակաւորութիւնը յաղթեց եւ պարթեւական արքայից արքան հռոմէական կայսեր յորդորներից յետոյ յետ կանգնեց պատերազմից: Ի հարկէ, պայթիւնավտանգ վիճակը դրանով չվերացաւ, սակայն պատերազմը շուրջ տասներեք տարով յետաձգուեց: Հասկանալի է, որ գահագուրկ Տիգրանն ստիպուած էր ապաստան փնտրել իրեն ազգակից պարթեւական թագաւորի մօտ:

Հազիւ թէ կարելի է կասկածել, որ Վաղարշ Բ-ի արժանապատուութեանը հասցուած վիրաւորանքը շատ մեծ էր, որովհետեւ շատ չանցած, նոյն 148 թ. նա մահացաւ: Անշուշտ, կարող է հարց ծագել, թէ ինչո՞ւ այդ դէպքերը պէտք է անպայման տեղ գտնէին նշուած թուականին: Առայժմ հարցը բաց թողնելով, լոկ նշենք, որ հետագայ քննութիւնը պատասխան կը տայ դրան: Հռոմի եւ Պարթեւական թագաւորութեան միջեւ յարաբերութիւնները մեծապէս սրուեցին Վաղարշ Բ-ին յաջորդած Վաղարշ Գ-ի իշխանութեան տարիներին (148-191): Կարողանալով վերջ տալ ներքին խռովութիւններին, վերջինս արդէն իրեն բաւարար ուժեղ էր զգում առաջիկայ հանգուցալուծման համար՝ պատրաստուելով արշաւել Հռոմի արեւելեան տիրոյթների վրայ եւ գրաւել Մեծ Հայքի թագաւորութիւնը: Սակայն 154/155 թ. պայթիւնավտանգ վիճակն էլ վերացուեց շնորհիւ կայսեր եւ պարթեւական թագա-

ւորի Եփրատի վրայ ունեցած տեսակցութեան³³: Սոհեմոս-Տիգրանի իշխանութիւնը Հայաստանում պահպանուեց, անտարակոյս, Անտոնինոս Պիոս կայսեր ճնշման ներքոյ, եւ խաղաղութիւնը չխախտուեց: Կացուցութիւնը սակայն արմատապէս փոխուեց Անտոնինոս Պիոսի մահից յետոյ (161 թ.), երբ պարթեւները՝ պահը յարմար գտնելով, զօրավար Խոսրովի հրամանատարութեամբ մուտք գործեցին Մեծ Հայքի թագաւորութիւն եւ Սոհեմոսի փոխարէն գահ բարձրացրեցին Բակուր Արշակունուն (161-163)³⁴: Այսպէս է ընդունուած բոլոր ուսումնասիրողների կողմից: Սակայն չի բացառուում, որ մինչեւ գերի ընկնելը թագաւորի թեկնածու էր նաեւ գահընկէց արուած Տիգրանը, որը միայն 161-ին կարող էր ասպատակել Միջերկրեայքը: Դրա օգտին է խօսում նաեւ Ղուկիանոսի յիշատակութիւնը: Ըստ որում, ինչպէս կրկին կարելի է դատել Պատմահօր հաղորդումից, ձեռքաւորուեցին միաժամանակ թէ՛ Տիգրանը եւ թէ՛ Սոհեմոս-Տիգրանը, որովհետեւ առաջինին Ղուկիանոս Կեսարը գերութիւնից չէր ազատի, այլ յաղթական կռիւներից յետոյ կարող էր ազատութիւն բերել միայն պարթեւական գերութեան մէջ գտնուող Տիգրան-Սոհեմոսին:

Պատերազմի հէնց սկզբում Կապադովկիայի կուսակալ էլիոս Սեւերիանոսը, որը, մուտք գործելով Մեծ Հայքի թագաւորութիւն, հասել էր մինչեւ Էլեգիա (Եղէզի, այժմ Իլիջա - Բ. Յ.), ծանր պարտութիւն կրեց Խոսրովի զօրքերից, իսկ պարթեւների հիմնական ուժերն անցան Եփրատը եւ ներխուժեցին Կապադովկիա ու Ասորիք: Ահա այս արշաւանքի մասին է

33 St'u Aristides, Orat-sacra I, էջ 453-454 (Ռրատ-Dindorfi): Վերցուած է Յ. Մանանդեանի «ՔԱՆԱկան տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան» աշխատութիւնից (հտ. Բ, մասն Ա, էջ 40):

34 Յ. Մանանդեան, «ՔԱՆԱկան տեսութիւն...», հտ. Բ, մասն Ա, էջ 40

գրում Պատմահայրը՝ խօսելով Պերոզ արքայի Ասորիք ու Պարստին եւ Տիգրանի Մէջերկրեայք կատարած արշաւանքի մասին: Տիգրանը, որ անկասկած պէտք է լինէր հայոց գահի թիւ մէկ թեկնածուն, գերի ընկնելով, քաղաքական պայքարից դուրս մնաց եւ Մեծ Հայքում թագաւորեց Բակուրը: Սակայն ի դժբախտութիւն պարթեւների, պատերազմում յաջողութեան նժարն աստիճանաբար թեքուեց հռոմէացիների կողմը: Գահ բարձրացած Մարկոս Աւրելիոս կայսրը (161-180) պարթեւական ճակատ ուղարկեց իր հոգեզաւակ կամ որդեգիր, գահակից եղբայր Լուկիոս Վերոսին, որին խորհրդակցեցին յիշում է Ղուկիանոս Կեսար անունով (161-169): Նա Անտիոք ժամանեց 163-ին՝ իր հետ բերելով թարմ ուժեր եւ մի քանի օժտուած հրամանատարներ, ինչպիսիք էին Աւրելիոս Կասիոսը, Ստատիոս Պրիսկոսը եւ Մարտիոս Վերոսը: Հռոմէական զօրքերը յարձակման անցան թէ՛ Մեծ Հայքում եւ թէ՛ Ասորիքում ու Միջագետքում: Յարձակումը զարգացում էր Արտաշատի եւ Տիգրանի շրջանում: 163 թ. վերջերին հռոմէական զօրքերը պաշարեցին եւ գրոհով վերցրեցին Մեծ Հայքի մայրաքաղաք Արտաշատը եւ աւերեցին ու կողոպտեցին այդ վաճառաշահ քաղաքը³⁵: Հռոմէական զօրքին առաջնորդում էր Ստատիոս Պրիսկոսը: Այդ նոյն ժամանակ Աւրելիոս Կասիոսի զօրքերը, գործելով Ասորիքում եւ Միջագետքում, յաղթեցին Վաղարշ Գ-ին Երուսաղէմ քաղաքի մատոյցներում՝ Ջեզմա գետանցի հարաւակողմում, գրաւեցին Եփեսոսի եւ Միդիայը: Հալածելով պարթեւական թագաւորին՝ Կասիոսը Միջագետքում աւերեց ու հրդեհեց կամաւոր անձնատուր եղած Սելեւկիա քաղաքը եւ այնուհետեւ աւերածութեան ենթարկեց Տիգրանը, որ տեղ 164 թ. արքունի դղեակը պարզապէս

հողին հաւասարեցուեց³⁶: Վաղարշ Գ-ն փախաւ իր տէրութեան արեւելեան նահանգները, սակայն հռոմէացիների գործերն էլ շուտով անյաջող ընթացք ստացան բանակում բռնկուած ժանտախտի հետեւանքով, որին զոհ գնացին մեծ թուով զինուորներ: Այս պատերազմները հանգամանալից նկարագրուած են Դիոն Կասիոսի եւ Յուլիոս Կապիտոլինոսի աշխատութիւններում³⁷: 164 թ.՝ Ստատիոս Պրիսկոսին փոխարինած Մարտիոս Վերոսը կրկին հայոց գահին հաստատեց Սոհեմոս-Տիգրանին, իսկ գահընկէց արուած Բակուրը՝ ձեռքաւորուելով, տարուեց Հռոմ, որտեղ դարձաւ Աւրելիան տոհմի որդեգիրը: 163-165 թթ. ընթացքում հատուել են ոսկէ, արծաթէ եւ պղնձէ դրամներ, որոնց մի երեսին պատկերուած է Մարկոս Աւրելիոսը կամ Լուկիոս Վերոսը, իսկ միւսին՝ Հայաստանը խորհրդանշող այլեւայլ պատկերներ, որոնցից մէկը ներկայացնում է հռոմէական դրօշի առջեւ նստած տխուր դէմքով մի կին, որի ներքեւում գրուած է Armenia, իսկ մի քանիսում Հայաստանի խորհրդանշող հայ մարդն է, որին սպանում է հռոմէական կայսրը իր նիզակով: Լուկիոս Վերոսի 164 եւ 165 թթ. ոսկի ու արծաթ դրամների վրայ պատկերուած է ինքը՝ գահին բազմած եւ շրջապատուած հռոմէացի զինուորներով: Նա թագ է դնում հայոց թագաւորի գլխին, իսկ պատկերի շուրջը գրուած է Rex Armeniis datus, այսինքն՝ «Հայերին թագաւոր տրուեց»³⁸:

36 Անդ, էջ 41

37 Scriptores historiae Augustae, vol. I, էջ 54-55: Դիոն Կասիոս, LXXI, 1.3; 2.1-4: Տեղեկութիւններ են պահպանել Աուտ Եւրոպիոսը (Breviarium, VIII, 10, 2), Վալիսիոս Գալիկանոսը (Scriptores historiae Augustae, vol. I, էջ 79, 81, 90), Ֆրոնտինոսը (Princ. hist. հրատ. Mai-ի, էջ 318, Ad Verum, էջ 167), Լուկիանոսը (De historia recte scribenda, 20, 24, 28, 30):

38 Լ. Յ. Գաթրճեան, Տիգրանական պատմութիւն, հտ. Բ, էջ 176

35 Անդ, էջ 40-41

Միքայել Չամչեանը եւ Կ. Կոստանեանը վաղուց նկատել են, իսկ Հետագայ ուսումնասիրողները՝ համաձայնել, որ Պատմահայրը Տիգրան Վերջինին նկարագրելիս նկատի է ունեցել Սոհեմոսին³⁹, որը Հայկական արքունական ականդորի համաձայն պարտաւոր էր կրել Հայկական Հարստութեան տոհմական անուն եւ, ամէն ինչից դատելով, վերցրել է Տիգրան անունը: Վերջը բերուած Մովսէս Խորենացու հաղորդման համաձայն, Տիգրան Վերջինն իշխել է 42 տարի: Սովորական թուաբանական հաշուարկները ցոյց են տալիս դրա ճշմարտացիութիւնը: Առաջին գահակալութեան շրջանում, ի նկատի ունենալով, որ նա իշխանութեան գլուխ եկաւ 148 թ., Սոհեմոս-Տիգրանն իշխել է 13 տարի, իսկ երկրորդ գահակալութեան փուլում, հաշուելով այն 163-164 թ.: 29 տարի, որով հաստատուած է Պատմահայր տեղեկութիւնը, քանի որ 191 թ. Մեծ Հայքում արդէն թագաւորում էր Հայոց Վաղարշ Բ թագաւորը: Պատմահայրը մասնաւորապէս նշում է, որ Տիգրան Վերջինի համար իրեն սկզբնաղբիւր է ծառայել Բարդաճան Եդեսացու (154-222) երկը, որն, անշուշտ, պահպանել է հեղինակի ժամանակներում ապրած եւ թագաւորած Սոհեմոսի մասին ճշգրիտ տեղեկութիւններ:

Մեծ Հայքի թագաւորութեան 165 թ. մինչեւ 193 թ. կամ Սեպտիմիոս Սեւերոս կայսեր գահակալութիւնը ծածկուած է պատմական մշուշով: Վիճակն աւելի լաւ է նաեւ երկրորդ դարի վերջում եւ գրեթէ ամբողջ երրորդ դարի ընթացքում, որն ուսումնասիրողները կողմից յիշուած համարում է Հայոց պատմութեան ամենամութ շրջանը⁴⁰: Խնդիրն այն է, որ կցկտուր եւ

խիստ հակասական նիւթի պայմաններում գրեթէ ամէն մի ուսումնասիրող իւրովի է փորձել տալ նշուած շրջանի ժամանակագրութիւնը: Մ. Աբեղեանը, անդրադառնալով այս խնդրին եւ քննութեան առնելով Գ. Խալաթեանցի, Հ. Սանտալճեանի, Հ. Աստուրեանի, Յ. Տաշեանի, Գ. Ասլանի, Յ. Մորգանի եւ Ա. Գարագաշեանի եզրակացութիւնները մեզ հետաքրքրող հարցի վերաբերեալ, եկել է այն մտքին, որ եթէ հեղինակների գործերը եթէ տարբեր տեսակի պատմութիւններ են, որոնք իրենցից չհիմնաւորուած են թաղութիւնների ու կուսակցութիւնների տարբեր համակարգեր են կազմում⁴¹: Յ. Մանանդեանը, չկիսելով նման եզրակացութիւնը, գտնում է, որ մատնանշուած խառնաշփոթութիւնները, որ հիմնականում ծագում են Դիոն Կասիոսի՝ Սանատրուկի որդի Վաղարշի մասին սխալ ընկալուած վկայութիւնից, բացատրելի են ու ներելի: Աւելին խորանալով հարցի մէջ, նա ցոյց է տալիս, որ Մանուկ Աբեղեանն իր հերթին կատարել է այնպիսի մի անյաշող ենթադրութիւն, ինչպիսին իբր թէ Խորոզմիշ Մեծ թագաւորի չգոյութիւնն է III դարում եւ վերջինիս լուր վիպական անձ լինելը⁴²: Յ. Մանանդեանը, որի կարծիքով յունահռոմէական հեղինակների սակաւթիւ եւ կցկտուր տեղեկութիւններով գուգակցելով դրանք Հայկական աղբիւրների պատմական-վիպական վկայութիւնների հետ, կարելի է վերականգնել այս դարաշրջանի քաղաքական պատմութիւնը եւ լուսաբանել Հայոց թագաւորների յաջորդական կարգն աւելի ճշգրիտ եւ աւելի հիմնաւոր կերպով, քան այդ արուած է պատմագիտական նախկին աշխատութիւններում⁴³: Նա անտարակոյս ճիշտ է, չնայած

39 Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Բն. Ա., Վեներիկ-Ս. Ղազար, 1784, էջ 355-357. К. Костанянц, История Армении (краткий очерк), Москва, 1911, էջ 42
40 Յ. Մանանդեան, Բնական տեսութիւն..., Բն. Ա., մասն Ա, էջ 50

41 Մ. Աբեղեան, Հայոց հին գրականութեան պատմութիւն, Բն. Ա., Երևան, 1944, էջ 501-503:
42 Յ. Մանանդեան, Բնական տեսութիւն..., Բն. Ա., մասն Ա, էջ 50-51:
43 ԱճԳ, էջ 51:

իր հերթին ինքն էլ շատ իրողութիւններ պարզապէս չի նկատել կամ ոչ ճիշտ է մեկնաբանել: Ինչպէս երեւաց մեր վերը կատարուած քննութիւնից, 191 կամ 192 թ. Մեծ Հայքում թագաւորում էր Վաղարշ Բ արքան, ուստի, առանց այլեւայլութեան, պէտք է հրաժարուել Յ. Գաթրճեանի, Ա. Գարագաշեանի, Գէորգ Ասլանի, Գ. Խալաթեանցի, Լէօյի, Հ. Սանտալճեանի եւ այլոց արտայայտած այն կարծիքից, թէ Սոհեմոս-Տիգրանից յետոյ Հայաստանում իշխել են Սանատրուկը եւ ապա նրա որդի Վաղարշը⁴⁴:

Արդէն նշուել է, որ Գ. Ասլանի կարծիքով Վաղարշ Բ-ը կարող էր լինել պարթեւական Վաղարշ Դ թագաւորի (191-208) եղբայրը կամ եղբորորդին, որը Մեծ Հայքին տիրացել էր, ըստ Յ. Մանանդեանի, Կոմոզոս կայսեր (180-192) իշխանութեան խառնակ տարիներին կամ գահակալական կռիւների ժամանակ, որ ծագել էին կայսրութեան մէջ Կոմոզոսի սպանութիւնից յետոյ, 193-194 թթ.⁴⁵: Պատմահայր, մեր կարծիքով, միանգամայն վստահութիւն ներշնչող ժամանակագրական տուեալների հիման վրայ հնարաւոր եղաւ վերը ճշտել Հայոց Վաղարշ Բ թագաւորի իշխանութեան գլուխ գալը 191 թ., չնայած տեսականորէն այն կարող էր ընկնել Կոմոզոսի սպանութեան տարում: Մի բան յստակ է, որ գահակալական կռիւների շրջանում նա արդէն թագաւորում էր Հայաստանում: Սակայն մենք բոլորովին էլ չենք կիսում

Գ. Ասլանի արտայայտած կարծիքը նրա ծննդաբանութեան խնդրում: Ըստ էութեան ոչ մի հիմք չկայ պնդելու, որ նա Վաղարշ Դ-ի եղբայրն էր կամ եղբորորդին: Ընդհակառակը, մենք ոչինչ չուենք հակադրելու Պատմահայր այն տեղեկութեանը, թէ Վաղարշը թագաւորեց իր հօր՝ Տիգրանի մահից յետոյ⁴⁶: Ի հարկէ, մեծ է գայթակղութիւնը, նրա հայր Տիգրանի անձի ներքոյ տեսնելու Սոհեմոս-Տիգրանին, ինչին կարելի է գալ հարցի մակերեսային քննութեան դէպքում: Խնդիրն այն է, որ ինչքան էլ հռոմէացիները Սոհեմոս-Տիգրանին մատուցեն որպէս Արշակունի, վերջինս հազիւ թէ պարթեւ Արշակունիների կողմից ընկալուած կամ գիտակցուած էր իրենց ազգական: Սակայն, միւս կողմից, չենք էլ կարող անտեսել այն իրողութիւնը, որ Վաղարշ Բ-ի հայրը, ինչպէս տեղեկացնում է Մովսէս Խորենացին, Տիգրանն էր կամ Տիգրան Վերջինը: Պատմահայր Տիգրան Վերջինի կերպարի մէջ, սակայն, տեղ է գտել, ինչպէս ցոյց տուեցինք, ոչ միայն Սոհեմոս-Տիգրանը, որը Տիգրան անունը կրող Հայոց թագաւորների շարքում ութերորդն էր, այլեւ Տիգրան Է-ն, որը ձերբակալուել էր եւ, ամենայն հաւանականութեամբ, տարուել Հռոմ: Սոհեմոս-Տիգրանի մահից յետոյ հռոմէացիները պէտք է լուծէին Մեծ Հայքի թագաւորի խնդիրը, որը Հռոմէացի պայմանագիրը այս կամ այն կողմից չյարգելու դէպքում մշտապէս յանգեցնում էր պարթեւահռոմէական պատերազմի: Պատերազմ մենք չենք տեսնում, իսկ յանձին Վաղարշ Բ-ի պարթեւական կամակատար էլ չենք տեսնում, որը մեզ իրաւունք է տալիս ենթադրելու, որ Վաղարշ Բ-ի գահ բարձրանալը կատարուել է հռոմէացիների պետութեան կողմից, իսկ վերջինս էլ եղել է ոչ թէ Սոհեմոս-Տիգրան Լ-ի, այլ Տիգրան Է-ի որդին: Չեւականորէն յարգելով Հռոմէացի

44 Հ. Յ. Գաթրճեան, Տիգրանական պատմութիւն, Բն. Ա., էջ 176-177: Ա. Գարագաշեան, Բնական պատմութիւն Հայոց, Բն. Ա., էջ 262-264: К. Aslan, Études historiques sur le peuple arménien, Paris, 1909, էջ 132-134; Гр. Халатъянц, Очерк истории Армении, էջ 314-318: Լէօ, Հայոց պատմութիւն, Բն. Ա., էջ 476-477. Jos. Sandaljian, Histoire documentaire..., էջ 556-559 եւ այլք:
45 К. Aslan, Études historiques..., էջ 133: Յ. Մանանդեան, Բնական տեսութիւն..., Բն. Ա., մասն Ա, էջ 51

46 Մովսէս Խորենացի, գիրք Բ, գլ. ԿԵ

պայմանագիրը, կայսրը հայոց գահը տուել է Արշակունի արքայազնի, սակայն պարզ է, թէ դա կատարուել է հռոմէացիների օգնութեամբ ու պարթեւների համաձայնութեամբ, թէ առանց դրա: Վաղարշ Բ-ը, գահ բարձրանալով, շուտով կարող էր իրեն գրեթէ անկախ զգալ, որովհետեւ կայսրութիւնը ներառնուեց երկարատեւ գահակալական պայքարի մէջ:

Կոմոդոս կայսրը սպանուեց 193-ին, սակայն պրետորիանները հեշտութեամբ այն աշխարհ ուղարկեցին նաեւ նրան յաջորդած Պերտինաքս եւ Դիդիոս Յուլիանոս կայսրերին արգէն նոյն 193 թ. լայն ասպարէզ բացելով գահակալական պայքարի թեժացման համար: Կայսերական գահի համար միանգամից յայտնուեցին երեք թեկնածուներ. Նիգերն Ասորիքում, Ալբինոսը Բրիտանիայում, իսկ գլխաւոր յաւակնորդ Սեպտիմիոս Սեւերոսը Իլլիրիայում: Հռոմում գահակալական կռիւների հարցում, անտարակոյս, ամենաշահագրգռուածները պարթեւներն էին, որոնց Վաղարշ Դ արքայից արքան Նիգերին ճանաչեց հռոմէական կայսր: Նիգերի իշխանութիւնը ճանաչեցին նաեւ Հռոմի արեւելեան հաւատարիմներ (վասալներ) Օսրոյէնե-Եղեսիայի թագաւոր Աբգար Թ-ը եւ Հադրայի արքայ Բարսեմիոսը: Այս կապակցութեամբ III դարի առաջին կէսի հեղինակ Հերոդիանոսը գրել է. «Նիգերը մարդ ուղարկեց Պարթեւաց, Հայոց եւ Հադրացոց թագաւորների մօտ՝ խնդրելու նրանցից օգնութիւն: Արդ, Հայոց թագաւորը պատասխանեց, որ նա ոչ մէկին չի օգնելու, սակայն եթէ Սեւերոսն իր վրայ յարձակուելու լինի՝ ինքը պատրաստ է իր երկիրը պաշտպանելու: Իսկ Պարթեւաց թագաւորն ասաց, որ կը հրամայի իր կուսակալներին զօրք գումարել. այսպէս էին նրանք սովորաբար անում, երբ հարկաւոր էր զօրք հաւաքել, որովհետեւ չունէին վարձկան զօրք եւ մնայուն զինապարտներ: Հադրացոց թագաւորը Նիգերին օգ-

նութիւն ուղարկեց աղեղնաւորների մի գունդ»⁴⁷: Հերոդիանոսի վկայութիւնը կասկած չի թողնում այլեւս, որ հայոց Վաղարշ Բ-ը, այնուամենայնիւ, գահ է բարձրացել հռոմէացիների կողմից, իրեն որեւէ ձեռով պարտաւորուած չի զգում Պարթեւական պետութեան նկատմամբ, վարում է անկախ քաղաքականութիւն՝ հրաժարուելով օգնել կողմերից որեւէ մէկին: Յատկապէս նրա անկախ գործելու մասին է հաւաստում պատմիչի այն հարողումը, որ հայոց թագաւորը պատրաստուում էր երկիրը պաշտպանել Սեպտիմիոս Սեւերոսի հաւանական յարձակման դէպքում: Եթէ ընդունենք մի պահ, ինչը պարզապէս առողջ դատողութիւնից զուրկ է, թէ Վաղարշ Բ-ը հայկական գահին տիրել է պարթեւների օգնութեամբ, ապա աներեւակայելի է, որ նա կարողանար իրեն դուրս պահել պարթեւական արտաքին քաղաքականութեան ոլորտից: Իսկ, եթէ, այնուամենայնիւ, Վաղարշ Բ-ի հայր Տիգրանը եղել է Վաղարշ Ա-ի որդին, ենթադրութիւն, որի համար՝ հաստատուելու թէ ժխտելու, պատմութիւնը, ցաւօք, անհրաժեշտ տեղեկութիւններ չի պահպանել, ապա պարզուում է, որ Սանատրուկից սկսած Մեծ Հայքում իշխող Արշակունիների արքայատոհմի կրտսեր ճիւղի ներկայացուցիչները ոչ միայն ձգտել են, այլեւ, կարելի է ասել, գործնականում ժառանգականի են վերածել իրենց իշխանութիւնը Հայոց թագաւորութիւնում: Դրան հասնելու համար նրանց այլ ճանապարհ չէր մնում, քան ձեռք բերել Հռոմի բարեացակամութիւնն ու համաձայնութիւնը, քանի որ Պարթեւ Արշակունիների արքայատոհմը կամովին երբեք չէր համաձայնուի դրան:

Գահակալական արիւնահեղ պայքարում 194 թ. աշնանը Նիգերը վերջնականապէս պարտուեց Իսոսի մօտ եւ փա-

47 Herodianus, *Ab excessu divi Marci libri VII*, ed. K. Stavenhagen, Lipsiae, 1922, III, 1.2:

խուստի ժամանակ սպանուեց: Արեւելքում յայտնուած Սեպտիմիոս Սեւերոսը որոշեց հաշուեյարդար տեսնել Նիգերի դաշնակիցների եւ անգամ անկախ դիրքորոշում որդեգրած Մեծ Հայքի թագաւորի նկատմամբ: Սակայն հայոց թագաւորը կարողացաւ կանխել պատերազմն իր դէմ՝ ուղարկելով հռոմէական կայսրին փող, նուէրներ ու պատանդներ, ինչպէս նաեւ խոստանալով զինակցութիւնն ու բարեկամութիւնը⁴⁸: Ըստ հուլիանի, հայոց թագաւորը Սեպտիմիոս Սեւերոսի դէմ չէր գործել, այնպէս որ համաձայնութիւնը կայացաւ եւ կայսրը նրան ճանաչեց Մեծ Հայքի թագաւոր: Եւ որքան կայսրը բարեացակամ գտնուեց հայոց թագաւորի նկատմամբ, այնքան նա դաժան հաշուեյարդար տեսաւ աղիաբէնցիների ու հադրացիների նկատմամբ, որոնք գրաւել էին հռոմէական ամրութիւնները Միջագետք պրովինցիայում եւ փորձում էին այդ երկրամասերը միացնել իրենց տիրոջին: Կայսրը ոչ միայն նրանց դուրս վտարեց, այլեւ անգամ նոր հողեր գրաւեց 195 թ.: Ալբինոսը, որ մինչ այդ հաշտուել էր Սեւերոսի հետ, կրկին գահակալական պայքար սկսեց այդ նոյն թուին եւ մինչ Սեպտիմիոս Սեւերոսը պայքարում էր նրա դէմ, պարթեւները 196-ին գրաւեցին Միջագետքը եւ պաշարեցին Մծբինը: Ալբինոսին 197 թ. յաղթելուց յետոյ Սեւերոսը կրկին Արեւելք եկաւ: Դրատոյ Սեւերոսը կրկին եղած Օսրոյէնեից սարսափահար եղած Թ-ն իսկոյն Եղեսիայի թագաւոր Աբգար Թ-ն իսկոյն իր հպատակութիւնը յայտնեց հռոմէական կայսրին եւ վերահաստատուեց իր իրաւունքներում, իսկ պարթեւական զօրքերը՝ հռոմէական զօրքերի բացառապէս համաձայնութեան պայմաններում, կան առաւելութեան պայմաններում, դուրս բերուեցին Միջագետքից, վերացրին Մծբինի պաշարումը եւ քաշուեցին պարթեւական տիրոջին: Սակայն պատերազմն այլեւս անխուսափելի էր դարձել,

քանի որ կայսրութեան միանձնեայ տիրակալն արգէն առաւել քան բաւարար ուժեր ունէր դէպի պարթեւների երկիրը արշաւելու համար: Զխորանալով կայսեր արշաւանքի մանրամասների մէջ, որոնք պահպանուել են Դիոն Կասիոսի աշխատութեան մէջ⁴⁹, նշենք լոկ, որ Սեպտիմիոս Սեւերոսը լիովին օգտագործեց իր բոլոր հնարաւորութիւնները, պարթեւական թագաւոր Վաղարշ Դ-ի եղբայր Տրդատի իր կողմն անցնելու հանգամանքը եւ, շարժուելով Եփրատի հոսանքով, գրաւեց արդէն դատարկուած Սելեւկիան ու Բաբելոնը, իսկ նուաճուած Տրզբոնը յանձնեց իր զօրքերի կողոպտմանը՝ գերեզմարելով շուրջ 100 հազար մարդու:

Սեպտիմիոս Սեւերոսը լաւ ռազմագէտ էր ու քաղաքական գործիչ: Խորապէս դիտակցելով, թէ ինչ առաւելութիւններ է ընձեռում կայսրութեանը Մեծ Հայքում թագաւորող Արշակունիների ճիւղի իշխանութեան ժառանգական դառնալը, նա ոչ միայն ճանաչեց Վաղարշ Բ-ի ժառանգական իշխանութիւնը, այլեւ Հայոց թագաւորութեանը մի շարք արտօնութիւններ տուեց: Մեծ Հայքից դուրս բերուեց Վաղարշապատում գտնուող հռոմէական կայսրը, հայոց թագաւորն իրաւունք ստացաւ մեծացնելու եւ ուժեղացնելու իր զօրքերը, որոնց պահպանութեան ծախսերի մի մասը կայսրութիւնը վերցրեց իր վրայ: Նպատակը յստակ էր. հայկական զօրքեւսպատակը յստակ էր. հայկական զօրքերով ապահովել կովկասեան լեռնանցքների պաշտպանութիւնը հիւսիսականներից, որպաշտպանութիւնը հին ոչ միայն ընդ յաճախ ասպատակում էին ոչ միայն Մեծ Հայքի թագաւորութիւնը, այլեւ կայսրութեան արեւելեան նահանգները⁵⁰:

49 Դիոն Կասիոս, LXXV, 9,1-4: St'u Awit Aeli Spartani Severus, XV-XVI. տե՛ս *Scriptores historiae Augustae*, vol. I, էջ 147-148: Ammianus Marcellinus, XXIV, 6,1:
50 J. Markwart, *Eranšahr*, էջ 102. տե՛ս Դիոն Կասիոս, LXXVIII, 27,4:

48 Ա.Ար, III, 9.2

տէրութիւնն հեռացի յինքեանց»⁹⁰: Սակայն հայոց թագաւորի երկրորդ նախածեռնութիւնն էլ մնաց անհետեւանք, քանի որ Պարսկաստանի ակազանին իրական ուժը համարում էր Սասանեաններին եւ ոչ թէ Հայ Արշակունիներին: Ըստ էութեան՝ բացի Հայոց թագաւորութիւնից, Արտաշիւրի դէմ պայքարում էր միայն Քուշանշահի թագաւորութիւնը: Հասկանալի է, որ Արտաշիւրն էլ ստիպուած էր գնալ փոխզինուածներով, որպէսզի ընդդիմադրութիւնը թուլանայ, ուստի երբ Ապարշահը, Մարվը կամ Մերվը՝ եւ Սագաստանը ճանաչեցին նրա իշխանութիւնը, Արտաշիւրն էլ ճանաչեց տեղական արքայատոհմերի իշխանութիւնը եւ աշխատեց չխառնուել իր իշխանութիւնը ճանաչած Պահլաւական ցեղերի ներքին գործերին⁹¹:

Քանի դեռ ոչնչացուած էին պարթեւ Արշակունիների վերջին շառաւիղները, Արտաշատը եւ նրա եղբայրները, ինչպէս նաեւ Մեծ Հայքի Արշակունեաց թագաւորութիւնը, Սասանեաններն իրենց ապահով էին զգում: Արտաշիւրի զօրքերը, հետապնդելով պարթեւ Արտաշատը, խորանում են նրա եւ նրա եղբայրների վերջին տիրոջները, գրաւում Ատրպատականը եւ դուրս գալիս Մեծ Հայքի թագաւորութեան հարաւարեւելեան սահմանները: Այժմ Հայ Արշակունիները ոչ այնքան

ստիպուած էին մտածել Պարթեւ Արշակունիներին իշխանութեան գլուխ վերադարձնելու, որքան սեփական պետութեան անվտանգութիւնն ապահովելու մասին:

Հռոմէական պատմիչ էլիոս Լամպրիդիոսը հաւաստում է, որ Ալեքսանդր Սելեւոս կայսեր հրամանով հայերին որպէս օգնութիւն մի զօրամաս է ուղարկում Մեդիայի կողմից յարձակուող պարսիկներին դիմադրակելու համար⁹²: Ըստ երեւոյթի՝ ճիշտ է, Ս. Երեմեանը, կարծելով, որ հռոմէացիները օգնութիւն են ցոյց տուել առաջին անգամ խորհրդով Մեծի դէպի Ասորեստան ձեռնարկած արշաւանքի ժամանակ⁹³: Ըստ որում, հեղինակն Ասորեստանի տակ հասկանում է պահլաւական-ասորական «Սուրիստան» երկիրը՝ այլ խօսքով Միջագետքը, որտեղ գտնւում էր Պարթեւական եւ այնուհետեւ Սասանեան մայրաքաղաք Տիգրանը⁹⁴: Դէպի Ասորեստան կատարած արշաւանքից յետոյ խորհրդով Մեծը օգնութիւն է խնդրում հռոմէացիների Փիլիպոս կայսրից (244-249), սակայն վերջինս կայսրութեան մէջ ստեղծուած խառնակ վիճակի պատճառով նրան օգնութիւն ցոյց տալ չկարողացաւ եւ միայն հրաման տուեց, որ բոլոր կողմերից սատարեն հայոց թագաւորին⁹⁵: Օգնութիւն ստացուեց Եգիպտոսից եւ անապատից մինչեւ Պոնտոսի ծովագրեայքն ընկած երկրներից: Այսպիսի մեծ օգնութիւն ստանալուց յետոյ խորհրդով Մեծն արշաւեց Արտաշիւրի դէմ, յաղթեց նրան ու փախուստի մատնեց՝ գրաւելով ոչ միայն Ասորեստանը, այլեւ Սասանեաններին պատկանող արքունի շատ աշխարհներ⁹⁶: Անդրադառնալով Կա-

92 Aelius Lampridius, *Alexander Severus*, LVIII, BDN, 1958, թիւ 3, էջ 258
 93 Մովսէս Խորենացի, գիրք Բ, գլ. ՀԱ
 94 Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. Բ, էջ 28
 95 Մովսէս Խորենացի, գիրք Բ, գլ. ՀԱ-ՀԲ
 96 Անդ, գիրք Բ, գլ. ՀԲ: Ս. Երեմեանն իրաւացի է, երբ գրում է, թէ Պատմահայրը քննուող ժամանակաշրջանի անձերը միասինս էլ աւելի ուշ

90 Մովսէս Խորենացի, գիրք Բ, գլ. ՀԲ: Այստեղ նկատում է մի պարագայ, որը որեւէ ձեռով չի արտայայտուած հայոց թագաւորի ուղարկած բանագնացների առաջին առաքելութեան ժամանակ: Հաւանաբար սկզբում հայոց թագաւորը կամեցում է ինքը թագաւորել Պարսկաստանում որպէս Պարթեւ Արշակունիների օրինական ժառանգ, սակայն համոզուելով, որ այդ ճանապարհով հնարավոր չէ ընդհանուր ճակատ տեսնել Արտաշիւրի դէմ, պարթեւական ցեղերին շահագրգռելու համար խոստանում է նրանց առաջնորդներից արժանատիին թագաւորական գահ բարձրացնել:

91 В. Г. Луконин, *Культура Сасанидского Ирана*, стр. 51.

րէնի Պահլաւի տանը, Ս. Երեմեանը կարծում է, որ այդ անուկով են յայտնի քուշանների պարթեւ Արշակունիները: Հեղինակը փորձում է իր այդ տեսակէտը, որ բոլորովին էլ հաւանական չէ, բացատրել այն հանգամանքով, թէ հնարաւոր է, որ խորենացին առանձին ուշադրութիւն է նուիրում Հայաստան գաղթած պահլաւական-պարթեւական տոհմին, որպէսզի արդարացնի Ագաթանգեղոսի ներկայացրած վարկածը Գրիգոր Լուսաւորչի եւ նրանից սերած կաթողիկոսական դինաստիայի պարթեւական ծագման մասին⁹⁷: Մենք ոչ մի կերպ չենք կարող համաձայնել նման տեսակէտի հետ, քանի որ, երբ խօսուում է Կարէնի Պահլաւ, Սուրէնի Պահլաւ եւ Ասպահապետի Պահլաւ ցեղերի մասին, պատմիչն ի նկատի ունի Պարթեւական թագաւորութեան մէջ արքայական Արշակունեաց տոհմի յենարան հանդիսացող ուժերին, որոնցից Կարէնի Պահլաւ ցեղից էին սերում ոչ միայն Պարսկաստանում իշխող Պարթեւ Արշակունիները, այլեւ Մեծ Հայքում եւ այլ երկրներում թագաւորող Արշակունիները: Հետեւաբար, եթէ Սուրէնի եւ Ասպահապետի Պահլաւ ցեղերը՝ նախանձելով թագաւորական ցեղին, ճանաչեցին Արտաշիւրի իշխանութիւնը, ապա իշխանութիւնը կորցրած Կարէնի Պահլաւի ցեղը, կամայ թէ ակամայ, եթէ ոչ ամբողջութեամբ, ապա գերակշիռ մասով պայքարում էր կորցրած իշխանութիւնը վերադարձնելու համար: Ցաւօք, այդ ցեղի մի մասն անցաւ Արտաշիւրի կողմը եւ մասն անցաւ Արտաշիւրի կողմը եւ հետագայում՝ յանձին Անակ Պարթեւի տոհմակիցների, իբրեւ թէ փախաւ Մեծ

Հայք, իսկ Անակ Պարթեւը եւ նրա եղբայրը դաւադրաբար սպանեցին խորհրդով Մեծին:

Արտաշիւրը հանդիպեց Հայ-պարթեւական յամառ դիմադրութեանը: Արտաւան-Երի Արտաւազը որդին եւ նրա եղբայրներն իրենց զօրքերով մասնակցում էին Հայոց բանակի ռազմական գործողութիւններին, որը լուրջ յաջողութիւնների հասաւ սկզբում Հիւսիս-արեւմտեան Պարսկաստանում: Ս. Երեմեանը հակուած է կարծելու, որ Արտաւազը կարողացաւ իշխել Վերին Մեդիայի կենտրոն էկրատանում վայելելով Հայոց խորհրդով Մեծ-Տրդատ Բ թագաւորի հովանաւորութիւնը: Որն իրեն համաւորում էր առաջինը Արշակունեաց գահաւորում էր կալները մէջ, իսկ Արտաւազը գրաւում կալների մէջ, իսկ Արտաւազը գրաւում էր «երկրորդական գահը»⁹⁸: Սակայն Սասանեան Արտաշիւրին յաջողուեց գերել Արտաւազին, որը շատ չանցած գլխատուեց Տիգրանում: Յենուելով Պատմահօր տեղեկութիւնները Վրայ՝ Ս. Երեմեանը գալիս է կուրիւնների վրայ՝ Արտաւազը գրաւեց իր շտապելով օգայն եզրակացութեան, որ շտապելով օգայնութեան Արտաւազին՝ խորհրդով Մեծ-Տրդատ Բ-ը, չկարողանալով կանխել Արտաւազի գերելարումը Արտաշիւրի զօրտաւազի գերելարումը Արտաշիւրի զօրտաւազի կողմից, այնուամենայնիւ, կարճ ժամանակով տիրում է էկրատան քաղաքին եւ նրա շրջակայ տարածքներին՝ գրաւեալ երկիրը յանձնելով Երախնաւու Անձեւացի իշխանութիւնը կորցրած Կարէնի Պահլաւի ցեղը, կամայ թէ ակամայ, եթէ ոչ ամբողջութեամբ, ապա գերակշիռ մասով պայքարում էր կորցրած իշխանութիւնը վերադարձնելու համար: Ցաւօք, այդ ցեղի մի մասն անցաւ Արտաշիւրի կողմը եւ մասն անցաւ Արտաշիւրի կողմը եւ հետագայում՝ յանձին Անակ Պարթեւի տոհմակիցների, իբրեւ թէ փախաւ Մեծ

տեղի ունեցած դէպքերին եւ սկզբում խորհրդով Մեծը դիմել է ոչ թէ Փիլիպոս Արաբին, այլ Ալեքսանդր Սելեւոսին, որը՝ հակառակ կարակալայի, առանձին համակրանք ունէր հայերի կալստմամբ (Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. Բ, էջ 28: Trebellius Pollio, *Tyranni Triginta*, Titus, 323, BDN, 1959, թիւ 4, էջ 243)
 97 Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. Բ, էջ 28:

98 Անդ, էջ 30
 99 Անդ
 100 Մովսէս Խորենացի, գիրք Բ, գլ. ԹԷ

Հարուստ աւար¹⁰⁹, ապա Հերոդիանոսը եւ Ջոնարասը յատուկ գրում են, որ պարսիկները՝ բաւարար ուժեր թողնելով Մերիայի պաշտպանութեան համար, հիմնական ուժերով դուրս եկան կայսեր դէմ եւ շրջանցելով ու շատերին շրջապատելով ու չորս կողմից նետահար անելով, շատ հռոմէացիների կոտորեցին: Եւ որ այդ զօրքի մեծագոյն մասը նահանջելիս ոչնչացաւ լեռներում, իսկ նշանակալից մասը ծանր կորուստներ կրեց ցուրտ ձմեռուայ պատճառով, ուստի վերադարձաւ զօրքի միայն չնչին մասը¹¹⁰: Ջոնարասն առաւել յստակեցնում է, որ պարսիկները մեծ կորուստներ ունեցան, սակայն ոչնչացան նաեւ շատ հռոմէացիներ, ըստ որում՝ ոչ այնքան թշնամիներից, որքան հայկական ցրտերից, երբ Հայաստանով վերադարձող հռոմէացիները ոչնչացան ցրտից, կորցնելով վերջոյթները, եւ դրա համար մեղաւոր ճանաչուեց Ալեքսանդր Սեւերոսը¹¹¹:

233 թ. մոռանը կայսրը վերադարձաւ Հռոմ եւ 234 թ. արշաւանք սկսեց գերմանների դէմ: Սակայն նրան վիճակուած չէր երկար ապրելու եւ նա 235 թ. մարտին սպանուեց Մայնցի մօտ ու նրան յաջորդեց Մաքսիմինոս Թրակացին: Առանձնապէս յաջող չէին նաեւ Արտաշիւրի գործերը, որի զօրքերը նոյնպէս ծանր կորուստներ էին կրել եւ պատերազմի անորոշ ելքի պատճառով Միջագետք պրովինցիան շարունակեց մնալ հռոմէական իշխանութեան ներքոյ¹¹²:

Հայ-հռոմէական դաշնակցութիւնը եւ ռազմական համագործակցութիւնը շարունակուեց նաեւ 232 թ. յետոյ, չնայած շուրջ չորս տարի՝ 232-236 թթ., ընդհա-

նուր առմամբ խաղաղութիւն է տիրում՝ հակառակ պատերազմական վիճակի պահպանման: Էլիոս Լամպրիդիոսի եւ Հերոդիանոսի տուեալներով, կայսր հռչակուած Մաքսիմինոս Թրակացու զօրքերի մէջ, որոնք յաղթական կռիւներ մղեցին գերմանների դէմ, կային դաշնակից հայերի աղեղնազէն զնդեր: Լամպրիդիոսը յատկապէս նշում է, որ այն բանակը, որ Մաքսիմինոսը տարաւ Գերմանիա՝ Ալեքսանդր Սեւերոսին էր եւ ամենազօրեղն էր, քանի որ նրանում կային հայեր եւ օսրոյենցիներ, պարթեւներ եւ ամէն ցեղի մարդիկ¹¹³: Հերոդիանոսի համաձայն՝ Մաքսիմինոսի զորքում էին բարեկամ ու դաշնակից հայերը, վարձկան կամ փախստական պարթեւները եւ հպատակ օսրոյենցիները՝ որպէս աղեղնաձիգներ¹¹⁴: Աւելին՝ չնայած հայերի դաշնակից լինելուն, ինչպէս հաւաստում է Տրեբելիոս Պոլիոնը, ատում էր եւ նեղում հայ աղեղնաձիգներին, որոնց նա համարում էր Ալեքսանդր Սեւերոսի կողմնակիցը, քանի որ ներքին մեծ խռովութիւնների ժամանակ հայ աղեղնաձիգները Հռոմում կայսր էին հռչակել Տիտոսին¹¹⁵:

Պարսկա-հռոմէական պատերազմի յարաբերական դադարը, որ Ա. Քրիստենսսները եւ Յ. Մանանդեանը փորձում են բացատրել Արտաշիւր Ա Սասանեանի արեւելքում մղած կռիւներով¹¹⁶, ընդհատուեց չորս տարի անց: 237-238 թթ. ընդհատուեց արեւմուտք, Արտաշիւր Սասանեանը ներխուժեց Մեսոպոտամիա պրովինցիա եւ

113 Aeli Lampidii, Alexander Severus, 61.8
 114 Herodianus, Ab excessu divi Marci libri octo, VII, 2
 115 Trebelli Polionis, Tyranni triginta, 32.3 (տե՛ս Scriptores historiae Augustae, ed. Hohl, vol. II, Lipsiae, 1927, էջ 132):
 116 Christensen A., Sassanid Persia, տե՛ս, "Cambridge Ancient History, vol. XII, էջ 130; Յ. Մանանդեան, Հնագիտական տեսութիւն..., հտ. Բ, մասն Ա, էջ 81

109 Aeli Lampridii, Alexander Severus, 55,1-3 եւ 56, 1
 110 Herodianus, Ab excessu divi Marci libri octo, VI, 5-6
 111 Zonaras, Epitomae historiarum, XII, գլ. XV
 112 Յ. Մանանդեան, Հնագիտական տեսութիւն..., հտ. Բ, մասն Ա, էջ 78

գրաւեց Մծբինն ու Խառանը¹¹⁷: Հռոմում վիճակն անհանգիստ էր: Մաքսիմինոս Թրակացուն եւ կարճ ժամանակով իշխանութեան գլուխ եկած Գորդիանոսներին (237) յաջորդեց Գորդիանոս Գ-ը 238 թ., իսկ Սասանեան Պարսկաստանում 241 թ. իշխանութեան եկաւ Արտաշիւրի որդի Շապուհ Ա-ը (241-272): Պարսկա-հռոմէական կռիւները յատկապէս մեծ թափ ստացան Շապուհ Ա-ի օրօք, երբ 242 թ. նրա գլխաւորութեամբ պարսկական զօրքերը, գրաւելով Օսրոյէնէ-Եդեսիայի թագաւորութիւնը, շարժուեցին դէպի Անտիոք, իսկ պարսկական հեծելազօրն սկսեց ասպատակել Կապադովկիան ու Կիլիկիան: Աւելորդ է ասել, որ առանց Ասորիք մուտք գործելու պարսկական զօրքերը չէին կարողանայ ասպատակել ոչ Կապադովկիան եւ ոչ էլ Կիլիկիան, որոնք գտնուում էին Ասորիքից դէպի հիւսիս-արեւմուտք, հետեւաբար տարօրինակ է չնշում Ս. Երեմեանի այն միտքը, թէ հռոմէական Ասորիքին սպառնում էր պարսկական ներխուժման վտանգը¹¹⁸:

Հռոմն ստիպուած էր ծանր պայքարի մէջ մտնել Պարսկաստանի դէմ: Պատանի Գորդիանոս կայսրը, որ 242 թ. 17 կամ 18 տարեկան էր, բացեց Եանոսի տաճարի դռները՝ ի նշան այն բանի, որ պարսիկներին պատերազմ է յայտարարուած եւ դուրս եկաւ արշաւանքի Շապուհ Ա-ի դէմ: Դա տեղի ունեցաւ Պրեստիստատոսի եւ Ատտիկոսի կոնսուլութեան շրջանում, այսինքն՝ 242 թ.¹¹⁹, չնայած Գորդիանոս Գ-ի կենսագիր Յուլիոս Կապիտոլինոսի տեղեկութեամբ, պատերազմն արդէն սկսուել էր Գորդիանոսի եւ Պոմպէանոսի կոնսուլութեան տարում, այսինքն՝ 241 թ.¹²⁰: Ան-

117 Zonaras, XII, 18; Georgios Synkellos, Բռննի հրատ., էջ 683. Julius Capitolinus, Gordiani ives, 26, 5-6
 118 Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. Բ, էջ 34
 119 Julius Capitolinus, Gordiani fres, XXVI, 3
 120 Աճ, XXIII, 5

շուշտ, պատանի կայսրը չէր կարող ղեկավարել արշաւանքն իր անփորձութեան պատճառով, ուստի փաստական ղեկավարը կայսեր աներն էր՝ պրեստիանների պրեֆեկտ Տիմեոսը: Սկզբում ամէն ինչ հարթ էր ընթանում: Հռոմէական զօրքերը վերագրաւեցին իրենց տիրոյթները Միջագետքի թագաւոր Աբգար ԺԱ-ի (242-244) թոյլէնէլ թագաւոր Աբգար ԺԱ-ի (242-244) թագաւորութիւնը եւ պատրաստուեցին արշաւել դէպի Տիգրոն: Սակայն շուտով բախտը երես թեքեց հռոմէացիներին: 243 թ. վերջերին հռոմէական բանակը Խառուր գետի հոսանքով դուրս եկաւ Եփրատ եւ այնուհետեւ շարժուեց դէպի Սելեւկիա եւ Տիգրոն, սակայն արշաւանքի ժամանակ մահացաւ զօրքի փաստական հրամանատար Տիմեոսը: Պրեստիանների պրեստի պաշտօնն ստանձնեց Փիլիպոս Ա-ը, որն այն օգտագործելով իրեն հռչարաբը, որն այն հռոմէացիները, բոլորովին կեց կայսր: Հռոմէացիները, բոլորովին ազմտածելով հնարաւոր ծուղակի մասին, առանց դիմադրութեան հասան Տիգրոնի մատոյցներում գտնուող Մեսիխես (Բեթ-Մաշկենէ) վայրը, որտեղ 244 թ. փետրուարի 11-ի արեւմտահեղ ճակատամարտում պարտութիւն կրեցին, իսկ Գորդիանոս Գ կայսրը սպանուեց: Բանակը կայսր հռչակայրը սպանուեց: Բանակը կայսր հռչակեց Փիլիպոս Արաբ մականունով յայտնի կեց Փիլիպոս Արաբ մականունով յայտնի կեց Փիլիպոս Արաբ (244-249), որ Մարկոս Յուլիոս Փիլիպոսին (244-249), որ Մարկոս Յուլիոս Փիլիպոսի որդի էր: Նոր կայսեր իշխանութեան շրջանում էր, ուստի նա 244 թ. թիւնը շատ խախտու էր, ուստի նա 244 թ. հաշտութիւն կնքեց Շապուհի հետ՝ պարտաւորելով վճարել 500 հազար դրնար տաւորուելով վճարել 500 հազար դրնար ռազմատուգանք: Շապուհ Ա-ի թողած փառքի շարժումը եռալեզուեան արժաւորի Զարդուշտի եռալեզուեան արժաւորի անունը յաւերժացնելու համար Մեւթայրի անունը վերանուանել է Պերոգ-սիխես քաղաքը վերանուանել է Պերոգ-Շապուհ, այսինքն՝ «Յաղթական Շապուհ» (համապատասխանում է ներկայիս Սեյ-

խան կամ Սեյհան գիւղին - Բ. Յ.)¹²¹: Ինչ վերաբերում է Փիլիպոս Արաբին, ապա նա համաձայնեց յաղթական պարսից կողմի գործնականում բոլոր պայմաններին, քանի որ օր առաջ աշխատում էր հասնել Հռոմ եւ ձեռք բերել Ծերակոյտի կամ Սենատի համաձայնութիւնն իր կայսր հռչակուելու համար: Խոսքով Մեծը, որ Սասանեանների դէմ մղած պայքարում մեծ դեր էր յատկացնում հռոմէական ռազմական օգնութեանը, յայտնուեց ծանր կացութեան մէջ: Բիւզանդական շրջանի հեղինակները՝ Զոնարասի, Զոսիմոսի եւ Եւագրիոսի մօտ պահպանուած տեղեկութիւնների համաձայն Փիլիպոս Արաբը պայմանագիր էր կնքել պարսիկների հետ՝ զիջելով նրանց Միջագետքը (անշուշտ հռոմէական) եւ Հայաստանը¹²²: Զոսիմոսը պարզ գրում է, որ երբ Փիլիպոս կայսրը իշխանութեան գլուխ անցաւ, «նա պարսիկների հետ կնքեց ամենամօթաբեր հաշտութիւնը»¹²³, Եւագրիոսը հաւելում է, որ այդ պայմանագրով «Փոքր Հայքը հռոմէացիների ձեռքը մնաց, իսկ միւս բոլոր մնացածը՝ պարսիկների»¹²⁴: Հաշուի առնելով այն իրողութիւնը, որ Զոնարասի համաձայն Փիլիպոս Արաբը, երբ «տեսաւ, որ հռոմէացիները վշտացած են այդ երկրների կորստի պատճառով՝ մի փոքր յետոյ պայմանագիրն անվաւեր համարեց եւ երկրները ետ վերցրեց»¹²⁵, ուսումնասիրողների մեծ մասը

սը եկել է միանգամայն ճիշտ եզրակացութեան, որ Միջագետքն ու Մեծ Հայքը, որ Հռոմի դաշնակիցն էր, թէեւ տրուել էին Շապուհ Ա-ին, սակայն պայմանագիրը չէր կենսագործուել եւ հռոմէական զօրքերը շարունակել էին մնալ այդ երկրներում¹²⁶:

Գերմանացի ակնաւոր հայագետ Յ. Մարքուարթի կարծիքով նոյնպէս, հաշտութեան պայմանները մնացել էին թղթի վրայ, սակայն, յենուելով Եւագրիոսի վկայութեան վրայ, հակուած է կարծելու, որ Մեծ Հայքի հարաւային երկրամասերը՝ Ծոփքը եւ Կորդուքը, իբրեւ թէ Եւագրիոսի մօտ անուանուած են «Փոքր Հայք» եւ պայմանագրի պայմաններով պէտք է մնային հռոմէացիների ձեռքում, իսկ Մեծ Հայքի մնացած մասը տրուելու էր պարսիկներին¹²⁷: Հարկ է նշել, որ հռոմէական հեղինակները հիանալի գիտեն, թէ որն է Փոքր Հայքը, ուստի հազիւ թէ կարելի է կարծել, որ Զոնարասը, Զոսիմոսը եւ Եւագրիոսը, որ ուղղակի կամ անուղղակի օգտուել են Դեքսիպոսի պատմական երկից, կարող էին Փոքր Հայք կոչել Ծոփքն ու Կորդուքը: Էլ չենք ասում այն մասին, որ դրա ճիշտ լինելու դէպքում հռոմէացիները սեպի պէս պէտք է խրուէին պարսկական տիրոջմեր մէջ՝ բաժանելով հռոմէական Միջագետքը, որ անցել էր պարսիկներին, Մեծ Հայքի մնացած տարածքներից: Շատ ցաւալի է, որ այդ սխալ ենթադրութիւնը ոչ միայն պաշտպանութիւն է գտել Ս. Երեմեանի կողմից այլեւ յաւելուել նոր մանրամասներով, թէ իբր Տիգրանակերտի յունարէն արձանագրութիւններից (III դարի վերջ) երեւում է, թէ Տիգրանակերտը եւ Նեկրանը գտնուել են հռոմէական Հայաստանում՝ բաժանման սահ-

121 Շապուհ Ա-ը արձանագրութիւնը փորագրել է շատ անելի ուշ՝ 262 թ. (տե՛ս Н. В. Пигулевская, Города Ирака в среднем средневековье, М.-Л., 1956 էջ 167): Տե՛ս նաեւ «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 41-42: Յիշեալ Պերոգ-Շապուհը, ինչպէս իրաւացիօրէն գնում է Ս. Երեմեանը, չպէտք է շփոթել Մոսուլից հիւսիս գտնուող Պերոգ-Շապուհի հետ, որը Աերկայի Փեշաբուր գիւղն է:

122 Zonaras, XII, 19: Zosimos, III, 32, 4: Evagrius, Historia ecclesiastica, V, 7
 123 Zosimos, III, 32, 4
 124 Evagrius, նշ. աշխ. V, 7
 125 Zonaras, XII, 19:

126 Յ. Մանանդեան, Քննական տեսութիւն..., հտ. Բ, մասն Ա, էջ 83
 127 J. Markwart, Untersuchungen zur Geschichte von Eran, Zweites Heft, Leipzig, 1905, էջ 218-220, ծնթ. 2

մանագծից ոչ հեռու¹²⁸: Հեղինակը բերում է Փաւստոս Բուզանդի հաղորդումն այն մասին, թէ ինչպէս 297 թ. ճակատամարտ տեղի ունեցաւ հայ-հռոմէական զօրքերի մի կողմից, եւ պարսկական զօրքերի՝ միւս կողմից, միջեւ Ուխայ գիւղի մօտ՝ Բասեան գաւառում, որը պարսկական Հայաստանում էր եւ սահմանակից հռոմէական Հայաստանին¹²⁹: Հետեւաբար, ըստ Ս. Երեմեանի՝ հռոմէացիների ձեռքում էին Ծոփքը եւ նախկին Փոքր Հայքի մաս կազմող Բարձր Հայք աշխարհը¹³⁰ եւ որ Մեծ Հայքի մնացած մասը յիշեալ պայմանագրով զիջուած է Սասանեաններին: Դրանով էլ նա փորձում է բացատրել այն իրողութիւնը, որ ըստ Ա.գաթանգեղոսի՝ իբր հռոմէական Հայաստանը դիտուում է որպէս «դաստակերտ կայսերաց»¹³¹, իսկ համաձայն ՏՅԿԶ-ի՝ Սասանեանների դաստակերտ էր համարուում պարսկական Հայաստանը: Կարելի է արդեօք համաձայնել նման տեսակետի հետ: Խնդիրն այն է, որ III դարի վերջի քաղաքական կացութիւնը ոչ մի կերպ չի կարելի նոյնացնել III դարի առաջին կէսի վերջերի հետ: Այսպէս կոչուած Տիգրանակերտի արձանագրութիւնը, քանի որ Տիգրանակերտը՝ հակառակ գերմանացի հետազօտողների, Յ. Մանանդեանի, Ս. Երեմեանի եւ ուրիշների, չի գտնուել Ֆարկինի տեղում, որը Նփրկերտ-Մարտիրոս պոլիս-Մուփարդինն է, մեր կարծիքով նման եզրակացութիւնների իրաւունք չի տալիս, անկախ անգամ այն հանգամանակից Նեկրանն իրօք նոյնանում է Խարաբա-Նաջարանին կամ հինաւուրց Արշամա-

շատ քաղաքին¹³²: Արդէն այն հանգամանքը, որ 293 թ. յետոյ Մեծ Հայքի թագաւորութիւնը՝ բացառութեամբ Անդրտիգրիսեան 5 երկրամասերի՝ Անդեղտան, Ծոփքի (իմա՛ Մեծ Ծոփքի - Բ. Յ.), Աղձնիքի, Կորդուքի եւ Ծաղէքի, պատկանում էր Տրդատ Մեծին թէ՛ միջագետքի իրաւունքի եւ թէ՛ գործնական տեսակէտից, ցոյց է տալիս, որ Փաւստոս Բուզանդի յիշեալ տեղեկութիւնը ոչ մի կերպ չի կարող հիմք տեղեկութիւնը ոչ մի կերպ չի կարող հիմք տալու համար: Գիծը Հայաստանում ցոյց տալու համար: Ինչ ինչ, սակայն III դարի վերջերին շատ յստակ էր Փոքր Հայքի տարածքը, ուստի յստակ էր Փոքր Հայքի ինքնուրու Յ. ոչ մի կերպ չի կարելի յենուել Յ. Մարքուարթի եզրակացութեան վրայ ու Փոքր Հայք հռչակել Ծոփքն ու Կորդուքը Բարձր Հայքի տարածքը, եւ դրան յաւելել Բարձր Հայքի տարածքը, որը մի քանի դար առաջ, անշուշտ, մտել է Փոքր Հայքի մէջ: Էլ չենք ասում այն մասին, որ Փոքր Հայքի մէջ երբեք չեն մտել ո՛չ Ծոփքը եւ ո՛չ էլ Կորդուքը: Իրականում Փիլիպոս Արաբը 244 թ. պայմանագրով պարսիկներին էր զիջել Մեծ Հայքի թագաւորութիւնը, սակայն, ինչպէս ճիշտ եզրակացրել են բոլոր ուսումնասիրողները, պայմանագրի յօդուածները մնացել թեանը վերաբերող յօդուածները մնացել էին թղթի վրայ, քանի որ, նախ եւ առաջ, պայմանագրից, պարսիկները անկախ պայմանագրից, պարսիկները ուժով ճնշելին պատկառելի ռազմական ուժ ներկայացնող Մեծ Հայքի թագաւորութեան դիմադրութիւնը, որպէսզի գաւորութեան դիմադրութիւնը, որպէսզի կարողանային կեանքի կոչել պայմանագիրը: Հայոց թագաւորութիւնը բանակցութիւնների մասնակից չէր եղել, հետեւաբար պարտաւորութիւններ էլ չունէր: Եւ վերջապէս Փիլիպոս Արաբ կայսրն ինքն էլ պարտաւորութիւններ էր կնքած պայմանագրի ողջ ա-

128 К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении (II в. до н. э. - IV в. н. э.), Москва-Ленинград, 1953, էջ 283-288. Ս. Տ. Երեմեան, Մեծ Հայքի թագաւորութեան բաժանումը Սասանեան իրանի եւ հռոմէական կայսրութեան միջեւ (244-253), ՊՐՀ, 1976, թիւ 1
 129 Փաւստոս Բուզանդ, դպր. Գ. գլ. ԻԱ
 130 Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. Բ, էջ 36
 131 Ագաթանգեղոս, գլ. ԺԲ § 127:

132 Հայ ժողովրդի պատմութիւն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հտ. Բ, էջ 36. տե՛ս Բ. Յարութեան, Տիգրանակերտ մայրաքաղաքի տեղադրութեան հարցի շուրջ, «Հայկազեան հայագիտական հանդէս», Բէյրութ, 1994, էջ 11-39:

րիանոս կայսրին արշաւել արեւելք 256 թ., չնայած բոլորովին չի բացառուում, որ նա Անտիոք եկած լինէր արդէն 253/254 թ. ձմռանը¹⁶⁶: Սկզբում կայսեր գործողութիւնները շատ էլ յաջող չէին, քանի որ նրա արեւելք գալուց յետոյ էլ պարսիկները 258/259 թթ. կարողացան ռազմակալել Ասորիքը: Այսուհանդերձ կայսրին յաջողուեց Կապադովկիայում փակել պարսիկների ճանապարհը եւ թոյլ չտալ, որ նրանք միանան գոթերին: Այդ ժամանակ էլ՝ անտարակոյս 256/257-ին խորով Մեծ-Տրդատ Բ-ը հռոմէական օգնութեամբ կարողացաւ ազատագրել պարսիկներից իր թագաւորութիւնը եւ վերահաստատուել իր Վաղարշապատ մայրաքաղաքում: Պատմահայրն, անդրադառնալով այդ շրջանի իրադարձութիւններին, գրում է, թէ՛ «...յետ սուսերահարն լինելոյ խորովու, միաբանեալ նախարարք Հայոց՝ ածեն իւրեանց յօգնականութիւն զգօրս Յունաց որ ի Փոլիզիայ՝ Պարսից ընդդիմանալ եւ պահել զաշխարհս: Եւ իսկոյն ազդեցին Վալերիանոսի կայսեր: Բայց վասն զի Գունդք (իմա՛ գոթերը - Բ. Յ.) անցեալ ընդ Դանուբ գետ զբազում գաւառս գերի վարեցին, եւ զԿիւղիզիայ կղզիս աւար առին՝ վասն որոյ ոչ ժամանէ մերոյ աշխարհիս թեւարկել Վալերիանոս. նա եւ ոչ յերկարէ զկեանսն, առնլով ի նմանէ զթագաւորութիւնն Կղաւղիոս եւ յետ նորա Աւրելիանոս, հուպ ընդ հուպ փոխանորդելով զմիմեանս. այլ եւ ամսականօք թագաւորեալ Կիւնտոս եւ Տակիտոս եւ Փղոսիանոս եղբարք: Վասն որոյ համարձակաբար արշաւեալ ի մեզ Արտաշրի, եւ զգօրս Յունաց փախստական արարեալ, գերելով զյոլով մասն աշխարհիս՝ յաւեր դարձուցանէ: Յորմէ գաղթեալ նախարարքն Հայոց, հանդերձ ազգաւն Արշակունեաց ի Յոյնս ապաւինէին. յորոց մի էր եւ Արտաւազդ

166 Cambridge Ancient History, vol. XII, 1939, էջ 136, ծնթ. 3 եւ 170-172

Մանդակունի, որոյ առեալ զՏրդատ որդի խորովու՝ ի դուռն կայսեր հասուցանէր»¹⁶⁷: Այս բաւականին խճողուած հաղորդումը, որ միանգամայն բնորոշ է Պատմահայր երկին, յիշուի վերին աստիճանի հետաքրքիր տեղեկութիւններ է բովանդակում: Նախ, անտարակոյս է, որ հայերը պէտք է, որ օգնութիւն խնդրած լինէին Վալերիանոսից թէ՛ մինչեւ խորով Մեծի սպանութիւնը եւ թէ՛ դրանից յետոյ, սակայն այս երկու խնդրանքները Պատմահայր երկում միահիւսուել են մէկի մէջ եւ այն էլ արդէն նրա սպանութիւնից յետոյ: Որ Վալերիանոսը օգնական զօրքեր էր ուղարկել խորով Մեծին, յստակ երեւում է այն տեղեկութիւնից, թէ Արտաշիրը (իմա՛ Որմիզդ-Արտաշիրը - Բ. Յ.) խորովի սուսերահար լինելուց յետոյ արշաւեց Հայաստան, գրաւեց այն եւ փախուստի մատնեց հռոմէական (բնագրում Յունաց - Բ. Յ.) զօրքերին, այլ խօսքով Վալերիանոսն արդէն ամենաուշը 256 թ. օգնական ուժեր էր ուղարկել խորով Մեծին, որը եւ կարողացել էր իր թագաւորութիւնն ազատագրել պարսից արքայի դրածոյ Արտաւազդ Ե-ի իշխանութիւնից: Այդ է հաւաստում նաեւ գոթերի կողմից Դանուբն անցնելը եւ Փոքր Ասիա ներխուժելը, որը եղել է մինչեւ 256 թ., հետեւաբար յիշեալ թուականին արեւելք եկած Վալերիանոսը՝ պարսկական եւ գոթական զօրքերի միացումը կանխելուց յետոյ կարող էր օգնութիւն ցոյց տալ խորով Մեծին, իսկ ուղարկուած զօրքերը կարող էին փախուստի ենթարկուել խորով Մեծի սպանութիւնից յետոյ պարսկական արշաւանքի արդիւնքում:

167 Մովսէս Խորենացի, գիրք Բ, գլ. 22: Սոյն հաղորդման շարունակութեամբ չենք անդրադառնում, որովհետեւ Պատմահայր յիշատակած Կղաւղիոսը բոլորովին էլ չի յաջողել Վալերիանոսին եւ իշխել է 268-270 թթ., Արելիանոսը՝ 270-275 թթ., Կիւնտոսը (իմա՛ Քուրմաիլոս - Բ. Յ.)՝ 270 թ., Տակիտոսը՝ 275-276 թթ. եւ Փղոսիանոսը (իմա՛ Փլորիանոսը - Բ. Յ.)՝ 276 թ.:

խորով Մեծի սպանութիւնից յետոյ, բնական է, որ հայերը նորից օգնութիւն էին խնդրել Վալերիանոսից, սակայն վերջինս ինքը գտնուում էր ծանր կացութեան մէջ եւ, Պատմահայր խօսքերով, չկարողացաւ «թեւարկել» Հայոց թագաւորութեանը: Շարունակութեան մէջ պարզուում է, որ շատ չանցած նա մահանում է, հետեւաբար տուեալ տեղեկութունը վերաբերում է 259 թ. յաջորդած շրջանին եւ ոչ թէ 256 թ.: Եւ վերջապէս, նման մեկնաբանութեան շնորհիւ պարզ է դառնում, թէ ինչու պարսիկներն Անակին ուղարկեցին Հայաստան եւ ինչու խորով Մեծն սպանուեց ոչ թէ Ջրմեսի կողմերը, ինչը ենթադրելի էր Սերեմեանի տեսակէտի դէպքում, այլ Այրարատեան դաշտում: Եթէ Ջրմեսում մի կերպ իր թագաւորութեան վերջին մնացորդին իշխող խորով Մեծն առանձին անհանգստութիւն չէր պատճառում պարսիկներին, ապա Հայոց թագաւորը՝ իր իշխանութիւնն ամբողջ Մեծ Հայքում վերահաստատելուց յետոյ դառնում էր պարսիկների համար խիստ վտանգաւոր եւ այն էլ Վալերիանոս կայսեր ձեռնարկած արշաւանքի շրջանում: Ուստի եւ Շապուհ Ա-ը թագաժառանգ Որմիզդ-Արտաշիրի միջոցով, որոշում է իրենց վտանգաւոր ախոյեանին պարզապէս ոչնչացնել:

Կայ այս առնչութեամբ եւս մի խնդիր, որ արժանի է ուշադրութեան: Պատմահայրն իր աշխատութեան մէջ Անակին համարում է Սուրէնեան Պահլաւի ցեղից¹⁶⁸: Իսկ յայտնի է, որ այդ ցեղը չարճաբանքեց Հայոց թագաւորի կոչերին կուռելու Սասանեանների դէմ: Հետեւաբար, հազիւ թէ այդ ցեղի ներկայացուցիչը վայելէր Հայոց թագաւորի վստահութիւնը: Իրականում այդպիսին կարող էր լինել Կարէնեան Պահլաւի ցեղը, որից սերում

168 Մովսէս Խորենացի, գիրք Բ, գլ. 27. «Յոր հրապարեալ Անակ, որ էր ի ցեղէն Սուրենեան Պահլաւ՝ յաճմ առնու սպանանել զխորով»:

էին Պարթեւ Արշակունիները: Յիշեալ ցեղը Վեհսաճանի գլխաւորութեամբ չենթարկուեց Սասանեաններին եւ որոշեց գալու միանալ Հայոց արքային, սակայն գրեթէ ամբողջութեամբ կոտորուեց պարսկական զօրքերի կողմից¹⁶⁹: Եւ վերջապէս, ինչպէս արդէն վերն արձանագրել ենք, մինչ Կամսարական նախարարութեան հիմնադիր Կամսարը, որ Կարէնեան Պահլաւի ցեղից էր, եկաւ ծառայելու Հայոց թագաւորին, ապա նրա եղբայրները հպատակուեցին Շապուհ Ա-ին¹⁷⁰: Հետեւաբար, տակուցին Շապուհ Ա-ին նրա եղբոր Հաբրէ խօսուում է Անակի եւ նրա եղբոր Հայաստան գալու մասին, ամենայն հաւանականութեամբ պէտք է նկատի ունենալ Կամսարի եղբայրներին, որովհետեւ նրանք անցել էին ծառայութեան Շապուհ Ա-ի մօտ:

Եթէ այժմ ի մի բերենք վերն ասուածը եւ լուսաբանենք դէպքերը, ապա եզրակաւում է, որ 256 թ. խորով Մեծ-Տրդատ Բ-ը հռոմէական զօրքերի օգնութեամբ վերականգնում է իր իշխանութիւնը Մեծ Հայքի թագաւորութիւնում, իսկ նրա Մեծ Հայքի թագաւորութիւնում, իսկ նրա տարում Մեծ Հայք եկած Անակը եւ նրա եղբայրը իրենց գալու երրորդ տարում սպանում են խորով Մեծ-Տրդատ Բ-ին եւ իրօք ստացում է, որ խորով Մեծը ինչպէս է 48 տարի, ինչպէս հաղորդում է Պատմահայրը:

Ուշադրութիւն է գրաւում մի հետաքրքիր հանգամանք եւս. թէ ինչո՞ւ Անակն իր նենգ ծրագիրն իրականացրեց ոչ թէ անմիջապէս, այլ միայն գալու երրորդ տարում: Հարկ է նշել, որ Անակը բոլորտարում վին էլ միամիտ մարդ չէր եւ սկզբում ձգտեց պարզապէս ձեռք բերել խորով Մեծի վստահութիւնը: Եւ մինչ նա դրանով էր զբաղուած, պարսիկները Միջագետքում գրաւեցին Դուրա-Եւրոպոսը¹⁷¹ եւ դրանով

169 Անո, գիրք Բ, գլ. 2Բ եւ 2Գ
170 Անո, գիրք Բ, գլ. 2Է
171 Բ. Փրայ, Наследие Ирана, М., 1972, стр. 202

էլ նրանց յաջողութիւններն սպառուեցին: Հռոմէացիները կարողացան հասնել այն բանին, որ պարսիկների ահարկու թագաւորը հաշտութիւն կնքի, որը տեղի ունեցաւ, Վ. Լուկոնիւսի կարծիքով, 257/258 թթ.¹⁷²: Անտարակոյս է Վ. Լուկոնիւսի քաջիմացութիւնը նշուած հարցերում, սակայն մեր կարծիքով, հաշտութիւնն աւելի շուտ կայացաւ 257 թ., քան 258-ին: Ս. Երեմեանը գտնում է, որ այդ համաձայնագրով Հռոմը, հաւանաբար ստիպուած եղաւ ճանաչել պարսիկները հետ 253 թ. կայացած համաձայնութիւնը, որով Հայաստանի մեծ մասն անցնում էր պարսիկներին, ինչպէս որ այն վճռուել էր 244 թ. եւ որ Մեծ Հայքի թագաւորութեան միայն փոքր արեւմտեան մասն էր մնում հռոմէացիներին¹⁷³: Հասկանալի է, որ վերը կատարուած քննութիւնից յետոյ այլեւս ոչ մի կերպ չի կարելի համաձայնել նման տեսակէտի հետ: Ընդհակառակը, անվերապահօրէն, բառ, որ ես միանգամայն գիտակցաբար օգտագործում եմ խիստ հագուազիւտ եւ՝ որպէս կանոն աւելի շուտ գերադասում եմ չօգտագործել, հաշտութեամբ ճանաչուեց խոսքով Մեծ-Տրդատ Բ-ի իշխանութունը Մեծ Հայքի թագաւորութեան ողջ տարածքի նկատմամբ: Սա, պէտք է ասել, մեծ անակնկալ էր Անակի համար, որը կամ ստիպուած եղաւ յետ կանգնել իր ծրագրից՝ հաշուի առնելով ստեղծուած նոր քաղաքական կացութիւնը, կամ էլ Շապուհ Ա-ից հրահանգ ստացաւ առ ժամանակ յետ կանգնել իրենց ձեռնարկից: Յամենայն դէպս հնարաւոր են թէ՛ մէկ եւ թէ՛ միւս տարբերակները:

259 թ. պարսկա-հռոմէական պատերազմը վերսկսուեց: Քաղաքական իրադրութիւնը կտրուկ փոխուեց եւ Անակը նոր պայմաններում ինքն անձամբ պէտք է ո-

րոշում կայացնէր պարսից արքայից արքային տրուած խոստումն իրագործելու մասին կամ էլ հրահանգ ստանար Շապուհ Ա-ից վերջապէս իրագործելու հայոց թագաւորի սպանութիւնը: Իսկ մինչ այդ Անակը, որ Շապուհ Ա-ից խոստում էր ստացել նրա թագաւորութեան մէջ արքայ հռչակուելու եւ պետութեան երկրորդ դառնալու, եւ Հայաստան էր եկել իբրեւ թէ պարսից թագաւորի դէմ ապստամբելու համար, ժամանել էր Ուտիք աշխարհ (հաւանաբար, Խաղխաղ քաղաքի մերձակայքում գտնուող Հայոց թագաւորութեան ձմեռոցն) ու ներկայացել նրան¹⁷⁴, աստիճանաբար սկսեց ձեռք բերել Խոսրով Մեծի վստահութիւնը: Նա հաւատացրեց հայոց թագաւորին, թէ իբր եկել է Հայաստան, որպէսզի «...հասարակ զհասարակաց վրէժ խնդրել մարթացուք»¹⁷⁵: Իսկ Խոսրով Մեծն էլ, տեսնելով, որ նա իր ամբողջ ընտանիքով ներկայացել է իրեն, հաւատաց նրան եւ դարձրեց իր թագաւորութեան երկրորդը, ձմռան ցրտաշունչ սառնամանիքային օրերն ուրախութեամբ անցկացնելով արքունի ձմեռոցում¹⁷⁶: Չնայած Ագաթանգեղոսը ոչինչ չի ասում երեք տարիների մասին, յուճա-հռոմէական աղբիւրները կասկած չեն թողնում այդ տեղեկութեան խնդրում: Ուստի այն հաղորդումը, թէ գարունը բացուելուն պէս նրանք իջան Այրարատեան գաւառում գտնուող Վաղարշապատ մայրաքաղաք եւ շարունակում էին իրենց ուրախութիւնը եւ որ հայոց թագաւորը միտք դրեց զօրք հաւաքել եւ «... արշաւել ի կողմանս Պարսից»¹⁷⁷ վերաբերում է ոչ թէ 256/57 թ. ձմռանը, այլ 258/259 թթ. ձմռանը եւ 259 թ. գարնանը: Ըստ էութեան՝ խնդիրը շատ պարզ էր: 259 թ. գարնանը, ամէն ինչից

174 Ագաթանգեղոս, գլ. Բ, § 25-28
 175 Անդ, գլ. Բ, § 29
 176 Անդ, գլ. Բ, § 30
 177 Անդ, գլ. Բ, § 31

172 В. Г. Луконин, Завоевания Сасанидов на Востоке и проблема абсолютной хронологии, стр. 32
 173 Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. Բ, էջ 46

գատելով, հռոմէական զօրքերն ստիպուած եղան պատերազմական գործողութիւնների մէջ մտնել պարսկական բանակի դէմ եւ հայոց թագաւորը Վալերիանոսից յանձնարարական ստացաւ արշաւելու Սասանեանների տէրութեան դէմ, իսկ Անակ Պարթեւն էլ՝ տեսնելով քաղաքական կացութեան փոխուելը կամ էլ հրահանգ ստանալով Շապուհ Ա-ից, արշաւանքը ձախողելու համար իր եղբօր հետ սպանեց հայոց թագաւորին: Ագաթանգեղոսի խօսքերով, նա «գերզումն ուխտին յիշէր որ ընդ Պարսից արքային ուխտեալ էր: Նա եւ զխոստմունսն յիշէր զպարզեւացն, եւ ի բուն աշխարհն փափագէր, որ Պալհան կոչէր»¹⁷⁸, ուստի Անակն առանձին խօսակցութեան է հրաւիրում թագաւորին իբրեւ թէ ինչ-ինչ հարցերի շուրջը խորհելու համար եւ զբօսանքի ժամանակ եղբօր հետ սուսերներով մահացու վիրաւորում են Խոսրով Մեծին: Այնուհետեւ տեսնելով, թէ ինչպէս դէպքի մասին իմացած թանձրացող ամբոխը գոյժի աղաղակ է բարձրացնում, Անակը եւ նրա եղբայրը, օգտուելով խառը վիճակից, «...հեծեալ յերաքանչիւր երկարս՝ փախստական լինէին»¹⁷⁹: Իմանալով այդ մասին նախարարներն իրենց զնդերով հետապնդում են նրանց, իսկ ոմանք էլ, ցամաքով շարժուելով, շտապում են հասնել Արտաշատ քաղաքի դարպասների մօտ գտնուող կամուրջներին: «Իսկ իբրեւ զայն գիտացին նախարարք հայա-կոյտ զօրացն՝ գունդ գունդ հատանէին, զկնի լինէին. ոմանք ընդ ցամաքն աճապարեալ, հասանել ի խելս կամրջացն առ դրունս Արտաշատ քաղաքի»¹⁸⁰: Եւ քանի որ «գետն Երասխ յարուցեալ գայլ լի դարիւ եւ դարիւ, սառնահալ, ջրակուտակ, ձիւնասոյգ, ձիւնախաղաղ բազմութեամբն յաւուրս իւրոյ պղտորութեանն: կէսքն

178 Անդ, գլ. Բ, § 32
 179 Անդ
 180 Անդ, գլ. Բ, § 33

անցեալ ընդ կամուրջն Վաղարշապատ քաղաքի, զոր եւ կամուրջ Մեծամօրի կոչեն՝ աճապարէին հասանել յառաջ մի ի խելս կամրջին Արտաշատու: Ի կիրճս ճանապարհացն արգելին զնոսա, ի մէջ արարեալ զնոսա՝ ի Տափերական կամրջացն գետովէժ առնէին զնոսա: Եւ ինքեանք անդրէն դարձեալ՝ վայիւք, ճշովք եւ ողբովք, եւ ամենայն երկիրն ժողովեալ զթագաւորն աշխարէին»¹⁸¹: Ինչպէս նշեցինք, թագաւորը ծանր վիրաւորուել էր եւ մինչեւ մահանալը նա կարգադրեց Անակի հետ ազգութիւնը ոչնչացնել¹⁸²: Իսկոյն ամբողջ ազգութիւնը ոչնչացնելու նպատակը կոտորածը, որի ժամանակ չինասկսուեց կոտորածը, որի ժամանակ չինասկսուեց ոչ միայն երիտասարդներին ու ծծկեր երեխաներին, այլեւ կանանց: Պարզապէս հրաշքով փրկուեցին Անակ Պարզապէս հրաշքով փրկուեցին Անակ Պարթեւի որդիներից երկու փոքր երեխաներ, որոնցից մէկին դայակները փախցրեցին Պարսից, իսկ միւսին՝ Յունաց (իմա՝ հռոմէական - Բ. Յ.) կողմերը¹⁸³: Ագաթանգեղոսը հաւաստում է, որ պարսից արքան, զոսը հաւաստում է, որ պարսից արքան, յայտնաբերելով Մեծ Հայքի թագաւորութեան ժամանակ իմանալով այդ պայմանները, շատ ուրախանում է եւ դրա պատուին տօնախմբութիւններ կազմակերպում ատրուշաններում¹⁸⁴:

Պատմաճօր տեղեկութիւնների համաձայն՝ Խոսրով թագաւորի սուսերահար լինելուց յետոյ հայ նախարարները միաբանում են եւ՝ հռոմէական օգնական զօրք ստանալով՝ Փոխկառավարի, զիմադրութիւն են ցոյց տալիս պարսիկներին¹⁸⁵: Անշուշտ, են ցոյց տալիս պարսիկներին, Վալերիանոսին ինչպէս եւ պէտք էր սպասել, Վալերիանոսը՝ լուր ստանալով այդ ամէնի մասին,

181 Անդ: Հասկանալի է, որ անմահ Գլարագորութիւնից յետոյ եւ այդ էլ այդքան պատկերատու, անկախ այն հանգամանքից, թէ պատմիչը դա վերցրել է ժողովրդական վէպից, թէ ոչ, Ս. Երեմեանի տեսակէտը՝ Անակի Չրմես գալու մասին, ոչ մի քննութիւն չի բռնում:
 182 Անդ, գլ. Բ, § 34
 183 Անդ
 184 Անդ, գլ. Բ, § 35
 185 Մովսէս Խորենացի, գիրք Բ, գլ. 29

չեւ Տրդատի երկրորդ գահակալութիւնն ի-
րօք կազմում է 27 տարի, քանի որ բոլոր
սկզբնաղբիւրներով եւ անգամ Մովսէս
Խորենացու պատմութեան քննութեամբ ա-
պացուցուում է, որ Տրդատ Մեծը երկրորդ
անգամ թագաւորեց ոչ թէ Դիոկղետիանոս
կայսեր երրորդ, այլ Հինգերորդ տա-
րում²³⁸:

Վոպիսկոսն, անդրադառնալով Աւրե-
լիանոսի գործունէութեանը, գրել է, որ
«նա պարսիկներին, որոնք մինչեւ այդ ժա-
մանակ ամբարտաւանացել էին Վալերիա-
նոսի կործանման պատճառով, ցաքուցրիւ
արեց, ի փախուստ դարձրեց եւ պարտու-
թեան մատնեց: Նրան սարակիստները,
...իբերները, աղուանները, հայերը, նաեւ
Հնդկաստանի ժողովուրդները մեծարում
են՝ գրեթէ իբրեւ Աստծոյ»²³⁹: Յաղթանակ-
ների համար Աւրելիանոսն ստացաւ Գո-
թական, Սարմատական, Հայկական, Պար-
թեական եւ Ադիաբենական տիտղոս-
ները²⁴⁰:

Ս. Երեմեանի կարծիքով, Տրդատ Գ-ն
Պալմիրայի նուաճման առթիւ Հռոմում
տեղի ունեցած տոնախմբութեան ժամա-
նակ Աւրելիանոս կայսեր կողմից թագադ-
րուել էր Արեւի աստծու տաճարում եւ
ստացել «Հելիոս» անունը²⁴¹: Բոլորովին
չմտնելով այն վէճի մէջ, թէ Գառնիի ար-
ձանագրութիւնը փորագրել է տուել
Տրդատ Ա-ը, թէ Տրդատ Գ-ը, նշենք միայն,
որ հազիւ թէ կարելի է համաձայնուել
նման ենթադրութեան հետ, քանի որ հան-
դիսութիւնները եղան 273 թ., իսկ Տրդատի
գահակալութիւնը չէր կարող լինել 274 թ.
առաջ: Օգտուելով առիթից՝ կամենում ենք
միայն աւելացնել, որ մեզ առաւել հաւա-

238 Տե՛ս Բ. Յարութիւնեան, Ե՞րբ է քրիստոնէու-
թիւնը Հայաստանում հաստատուել պետական
կրօն, «Հանդէս ամսօրեայ», 2000, էջ 131-228:

239 Flavius Vopiscus, Aurelianus, 41

240 Անդ, 30

241 Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. Բ, էջ 60

նական է թուում, որ Գառնիի արձանագ-
րութիւնը պէտք է վերագրել Տրդատ Գ-ի
գահակալութեան հեթանոսական շրջանին,
ինչպէս կատարում են Յ. Մանանդեանը,
Մ. Շոմոնը եւ Ս. Երեմեանը²⁴²: Կարծում
ենք, որ ճիշտ է Յ. Մանանդեանը, որը, հա-
մաձայն իր ընթերցման, արձանագրու-
թեան մէջ կարդում է Տրդատ Մեծի քրոջ՝
Խոսրովիդուխտի անունը, որը միանգա-
մայն համահունչ է Պատմահօր հաղորդ-
ման մէջ Խոսրովիդուխտի անունն յիշա-
տակութեանը: Սակայն ոչ մի կերպ չի կա-
րելի համաձայնել Յ. Մանանդեանի հետ
արձանագրութեան թուագրման խնդրում,
քանի որ նա այն դնում է 315-330 թթ. մի-
ջոցին՝ իբրեւ թէ քրիստոնէութեան ընդու-
նումից յետոյ: Մեր կարծիքով, արձանագ-
րութիւնն, այնուամենայնիւ, պէտք է
գրուած լինէր 288-305 թթ. միջոցին,
այսինքն՝ դեռեւս Մեծ Հայքի հեթանոսա-
կան շրջանում:

Տրդատ Գ-ն՝ որպէս Հռոմի հաւատա-
րիմ, մասնակցում է Հռոմի գոթերի դէմ
մղած պատերազմներին ոչ միայն Տակի-
տոս կայսեր վեցամսեայ գահակալութեան,
այլեւ նրան յաջորդած Պրոբոսի իշխանու-
թեան սկզբին: Պրոբոսը յաղթանակ տարաւ
գոթերի դէմ եւ ստացաւ Gothicus պա-
տուանունը: Սակայն Ս. Երեմեանի այն
տեսակէտը, որ Ագաթանգեղոսի համա-
ձայն՝ Տրդատն իբր արդէն թագաւոր է ե-
ղել կուռի դաշտում՝ գոթերի դէմ մղած
պատերազմի ժամանակ²⁴³ եւ այդ իբր տե-
ղի է ունեցել Պրոբոսի իշխանութեան ա-
ռաջին տարում, 276 թ., բոլորովին հեռու է
ճիշտ լինելուց²⁴⁴: Նախ Ագաթանգեղոսը

242 Յ. Մանանդեան, Բնական տեսութիւն..., հտ.
Բ, մասն Ա, էջ 131,135: M. L. Chaumont, Re-
cherches sur l'histoire d'Arménie de l'avenement
des Sassanides à la convention du Royaume,
Paris, 1969, էջ 94, ծմթ. 4. Հայ ժողովրդի պատ-
մութիւն, հտ. Բ, էջ 60:

243 Ագաթանգեղոս, գլ. Դ, § 44-46

244 Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. Բ, էջ 61

չի ասում, որ նա գոթերի հետ պատերազմի
ժամանակ թագաւոր էր²⁴⁵, հետեւաբար, ե-
թէ հարցին մօտենանք այդ տեսանկիւնից,
ապա Տրդատի հետ կապուած դէպքը
պէտք է դնել մինչեւ նրա թագադրութիւ-
նը, այսինքն՝ 274 թ. առաջ կամ 274 թ.
սկզբներին: Սակայն չմոռանանք, որ 276
թ. յետոյ Տրդատն անգամ Հռոմի կողմից
կարող էր եւ թագաւոր չճանաչուել, հետե-
ւաբար Տրդատը կարող էր մասնակցել գո-
թերի դէմ մղուող կռիւներին նաեւ աւելի
ուշ:

Պրոբոս կայսեր գործերն Արեւելքում
բոլորովին յաջող չի կարելի համարել:
Դժուար է ասել, թէ որո՞նք էին շարժա-
ռիթները, սակայն Պրոբոսն, ըստ երեւոյ-
թին, 276 թ. Վարահրան Ա-ին (Վռամ Ա.)
զիջեց Տրդատ Գ-ի փոքրիկ տիրոջինը
Մեծ Հայքի արեւմտեան մասում²⁴⁶: Են-
թադրել, թէ դա տեղի ունեցաւ Վարահրան
Բ-ի (276-293) օրօք, ոչ մի հիմք չունի, ո-
րովհետեւ այլապէս պէտք է ենթադրել
Տրդատ Գ-ի առաջին գահակալութիւնը ոչ
թէ 274-276 թուերին, այլ շատ աւելի եր-
կար, որը չի հաստատուում եւ ոչ մի
սկզբնաղբիւրով: Մեծ Հայքն ամբողջու-
թեամբ պարսիկներին զիջելը բոլորովին
չէր նշանակում, որ Պրոբոսի համար Մեծ
Հայքի թագաւորութիւնը դադարել էր հե-
տաքրքրութիւն ներկայացնելուց: Յայտնի
է, որ նա բանակցել է Վարահրան Բ-ի,
ինչպէս նաեւ 276 թ. Մեծ Հայքում հաս-
տատուած Ներսէսի հետ՝ ելնելով այն իրո-
շութիւնից, որ գահակալական խնդիրների
հետ կապուած նրանց յարաբերութիւնները
խիստ լարուած էին ու թշնամական, ուստի
հռոմէական դիւանագիտութիւնը խաղա-
ցել է դրա վրայ՝ փորձելով հասնել Մեծ
Հայքի արեւմտեան մասի վերադարձմանը:

245 Ագաթանգեղոս, գլ. Դ, § 44

246 Մ. Օրմանեան, Ագաթայատում, Ա. հտ., էջ 78.
տե՛ս նաեւ Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. Բ,
էջ 61:

Պատմագրութեան մէջ մտած այն դրոյթը,
թէ 283-286 թթ. հաշտութիւն է կնքուած
եղել Վարահրան Բ-ի հետ եւ համաձայն
այդ պայմանագրի իբր Մեծ Հայքը յանձ-
նուել է կայսրութեանը²⁴⁷, մեր կարծիքով
հիմնաւորում չեն ստանում աղբիւրնե-
րում: Միանում ենք այն ուսումնասիրող-
ներին, որոնց կարծիքով օրինաւոր դաշինք
նույն ժամանակահատվածում հաշտու-
թեամբ, մինչեւ երրորդ դարի վերջերը
թէ՛ Հայաստանը եւ թէ՛ Միջագետքը
գտնուել են տարտամ ու անորոշ դրու-
թեան մէջ եւ անցել են ձեռքից ձեռք²⁴⁹:

Հայաստանի մեծ թագաւոր Ներսէսը,
որը խիստ վիրաւորուած էր որպէս օրինա-
կան ժառանգ սասանեան գահից զրկուելու
համար, կամենում էր իրօք դառնալ Մեծ
Հայքի թագաւոր եւ փորձում էր ձեռք բե-
րել հռոմէացիների համաձայնութիւնը:
Սակայն հռոմէացիներն, այնուամենայնիւ,
գերադասում էին գործ ունենալ Տիգրանի
Սասանեանների հետ, ուստի այդ-
աւագ Սասանեանների համաձայնութեան չեկաւ
կայսրութեան հետ:

Սասանեան գահակալների իշխանու-
թեան շրջանը Հայաստանում, ինչպէս նշե-
ցինք, Պատմահայրը համարում է 27 տարի
եւ, ինչպէս արդէն ասուել է, այդ թիւը
ստանում է Արտաշէր Սասանեանի իշխա-
նութեան 26 տարիներին միացնելով իբրեւ
նույն թեմայի Տրդատի գահակալելը Շապուհ
թէ մինչեւ Տրդատի գահակալելը Ս. Ե-
թագաւորի մէկ տարին, հետեւաբար Ս. Ե-
թեմեանը պարզապէս սխալում է՝ յայտա-

247 Th. Mommsen, Römische Geschichte, T. V, էջ
443. Յ. Տաշեան, Ագաթանգեղոս և Պրոբոս
ասորի եպիսկոպոսին եւ ուսումնասիրութիւն
Ագաթանգեղայ գրոց, Վիեննա, 1891, էջ 125.
Գր. Халатьянц, Очерки истории Армении, էջ
345

248 Հ. Աստուրեան, Քաղաքական վերաբերութիւն-
ներ..., էջ 253. А. Аннинский, Древние армянские
историки..., էջ 45

249 Յ. Մանանդեան, Բնական տեսութիւն..., հտ.
Բ, մասն Ա, էջ 102

րարելով, որ իբր Պատմահայրն անիշխանութեան շրջանի տեղողութիւնը համարում է 26 տարի²⁵⁰: Անհասկանալի պատճառներով Ս. Երեմեանը չի հաշուում Շապուհի մէկ տարին, չնայած պարզ է, թէ ինչու է հեղինակը փորձում անտէրունչութեան շրջանը հաշուել 26 տարի: Մինչ օրս հայագիտութեան մէջ ընդունուած է, որ Տրդատ Գ-ն իշխել է Դիոկղետիանոս կայսեր իշխանութեան երրորդ տարում, այսինքն՝ 286 կամ 287 թթ.: Եթէ մենք 287-ից հանում ենք 26, ապա ստանում ենք 261 թ., երբ Որմիզդ-Արտաշիրը դարձաւ Մեծ Հայքի թագաւոր: Սակայն իրականում Տրդատ Գ-ն իշխել է ոչ թէ Դիոկղետիանոս կայսեր երրորդ, այլ հինգերորդ տարում, հետեւաբար, ինչպէս ցոյց ենք տուել, 27 տարուայ տեղողութիւնն իրօք իրեն արդարացնում է, քանի որ այդքան է 261 թ. մինչեւ Տրդատ Գ-ի երկրորդ անգամ թագաւորելու միջեւ ընկած ժամանակամիջոցը: Նման քննութիւնից յետոյ առաւել քան անհասկանալի են դառնում հեղինակի խօսքերն այն մասին, որ այդ 26 տարին (իրականում 27 տարին - Բ. Յ.) չպէտք է շփոթել Սամուէլ Անեցու՝ «Խոսրով սպանալ յԱնակայ եւ անիշխան մնաց աշ-

խարհս Հայոց զամս Իէ»²⁵¹ հաղորդման հետ, որն իբր ընդգրկում է 256-283 թթ.²⁵²: Մենք արդէն վերը ցոյց տուեցինք, որ Խոսրով Մեծը Անակի կողմից սպանուեց ոչ թէ 256, այլ 259 թ. եւ քանի որ Արտաւազդ Ե-ը չի մտել Հայոց թագաւորների Խորենացիական ցանկի մէջ եւ Պատմահայրը Խոսրով Մեծից անմիջապէս յետոյ դնում է Արտաշիրի գահակալութիւնը (իրականում՝ Որմիզդ-Արտաշիրի - Բ. Յ.), Խորենացու 26+1 տարիների տեղողութիւնը սկսւում է 261 թ. եւ աւարտւում է 288 թ.: Յետոյ հազիւ թէ կարելի է մտածել, որ Սամուէլ Անեցին իր ձեռքի տակ այլ տուեալներ է ունեցել: Նա, ինչպէս եւ մենք, Արտաշիրի 26 տարիներին գումարել է Շապուհի մէկ տարին եւ ստացել 27:

III դարի վերջի ժամանակագրութիւնը կապւում է Տրդատ Գ-ի երկրորդ գահակալութեան եւ Գրիգոր Լուսաւորչի գործունէութեան հետ, որը սերտ աղերս ունի Մեծ Հայքում քրիստոնէութեան պետական կրօն հռչակման հետ, որը մենք քննութեան ենք առել առանձին ուսումնասիրութեան մէջ²⁵³:

251 Սամուէլի Քահանայի Անեցոյ Հաւաքումը ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ-Ս. Էջմիածին, 1893, էջ 61
 252 Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. Բ, էջ 64
 253 Բ. Յարութիւնեան, Ե՞րբ է քրիստոնէութիւնը Հայաստանում հաստատուել պետական կրօն, էջ 131-228

250 Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. Բ, էջ 64

Zur Chronologie der Geschichte Armeniens in den II. und III. Jahrhunderten

Die Chronologie der Geschichte Armeniens in den II. und III. Jahrhunderten gehört zu den allermeist ungewissen Fragen der Armenologie, weil jeder Forscher infolge der bruchstückhaften Mitteilungen der bestehenden Quellen auf eigene Art und Weise diese Frage aufgeklärt und tatsächlich aufgrund der eigenen Interpretationen eine Chronologie aufgestellt hat. Von der unsererseits bereits erläuterten Tatsache ausgehend, dass Tiridates der Dritte im Jahre 288 (Handes Amsorya, 2006, S. 131-228) zum zweiten Mal den Thron bestiegen hat, sowie aufgrund der chronologischen Angaben von Movses Chorenatzi, die, wie es aus einer Überprüfung hervorkam, erstaunlicherweise mit den betreffenden Angaben der griechisch-römischen Quellen übereinstimmen, stellen wir die Chronologie der genannten Jahrhunderte in der nachstehenden Form wieder her.

In den Jahren:

- 76-110 König Sanatruk.
- 110 -113König Aschchadar.
- 113-114 König Parthamasir.
- 117-140/143 König Walarsch (Vologesos) der Erste.
- 140/143-148 König Tigran der Siebente.
- 148-161 König Tigran der Achte-Letzte (Sohemus) (Beim ersten Mal 14 Jahre).
- 161-163 König Bakur Arsachide.
- 164-191 König Tigran der Achte-Letzte (Sohemus) (Beim zweiten Mal 28 Jahre).
- 191-211 König Walarsch der Zweite (Das Römische Reich hat im Jahre 197 bzw. während der Herrschaftszeit von Walarsch dem Zweiten das Thronerbrecht der armenischen Arschakiden - Arsachakuni - anerkannt).
- 211-259 König Chosrow der Große (oder Tiridates der Zweite).
- Chosrow der Große wurde 216 von dem Kaiser Caracalla festgenommen. Der ihm nachfolgende Kaiser Macrinus hat Chosrow den Großen (Tiridates den Zweiten) wieder freigelassen und ihm eine Krone gesandt. Es wurde zug-

- leich die Mutter des armenischen Königs freigelassen, und auch die aus Armenien geraubte Beute wurde zurückgegeben.
- 227 Die Sassaniden kamen in Persien an die Macht.
- 232-243 Chosrow der Große hat 11 Jahre lang gegen die Sassaniden gekämpft, indem er versuchte, in Persien wieder die Arsachakiden an die Macht kommen zu lassen.
- 244 Der Kaiser Philippus Arab hat durch einen Vertrag das Königreich Großarmenien den Persern abgetreten (Der Vertrag wurde jedoch nicht erfüllt).
- 253 Unter dem persischen Druck zog Chosrow der Große in die westlichen Gebiete des Königreichs Großarmenien zurück.
- 253-256 Der persische Hof ließ Artawasd den Fünften in dem östlichen größeren Teil Großarmeniens den Thron besteigen.
- 256/257 Der König Chosrow der Große stellte seine Herrschaftsmacht auf dem ganzen Territorium Großarmaniens wieder her.
- 257 Der Persische Hof schickte Anak Arsachide zusammen mit seinem Bruder in das armenische Königreich, indem er ihnen den Auftrag erteilte, ihn zu ermorden.
- 259 Anak und sein Bruder ermordeten Chosrow den Großen, und auch sie beide wurden vom armenischen Heerr getötet.
- 259-261 Der König Artawasd der Fünfte bestieg wieder den armenischen Thron.
- 260 Während des Kriegs gegen die Perser wurde der Kaiser Valerianus gefangengenommen.
- 261 Der König Artawasd der Fünfte wurde vom persischen Hof entthront.
- 261-272 Der persische Hof lässt den Thronerben Wormisd-Artaschir in Großarmenien den Thron besteigen.
- 273-276 In Großarmenien thronte der Sohn von Wormisd-Artaschir Wormisdak.

րարելով, որ իբր Պատմահայրն անիշխանութեան շրջանի տեղողութիւնը համարում է 26 տարի²⁵⁰: Անհասկանալի պատճառներով Ս. Երեմեանը չի հաշուում Շապուհի մէկ տարին, չնայած պարզ է, թէ ինչու է հեղինակը փորձում անտէրունչութեան շրջանը հաշուել 26 տարի: Մինչ օրս հայագիտութեան մէջ ընդունուած է, որ Տրդատ Գ-ն իշխել է Դիոկղետիանոս կայսեր իշխանութեան երրորդ տարում, այսինքն՝ 286 կամ 287 թթ.: Եթէ մենք 287-ից հանում ենք 26, ապա ստանում ենք 261 թ., երբ Որմիզդ-Արտաշիրը դարձաւ Մեծ Հայքի թագաւոր: Սակայն իրականում Տրդատ Գ-ն իշխել է ոչ թէ Դիոկղետիանոս կայսեր երրորդ, այլ հինգերորդ տարում, հետեւաբար, ինչպէս ցոյց ենք տուել, 27 տարուայ տեղողութիւնն իրօք իրեն արդարացնում է, քանի որ այդքան է 261 թ. մինչեւ Տրդատ Գ-ի երկրորդ անգամ թագաւորելու միջեւ ընկած ժամանակամիջոցը: Նման քննութիւնից յետոյ առաւել քան անհասկանալի են դառնում հեղինակի խօսքերն այն մասին, որ այդ 26 տարին (իրականում 27 տարին - Բ. Յ.) չպէտք է շփոթել Սամուէլ Անեցու՝ «Խոսրով սպանալ յԱնակայ եւ անիշխան մնաց աշ-

խարհս Հայոց զամս Իէ»²⁵¹ հաղորդման հետ, որն իբր ընդգրկում է 256-283 թթ.²⁵²: Մենք արդէն վերը ցոյց տուեցինք, որ Խոսրով Մեծը Անակի կողմից սպանուեց ոչ թէ 256, այլ 259 թ. եւ քանի որ Արտաւազդ Ե-ը չի մտել Հայոց թագաւորների Խորենացիական ցանկի մէջ եւ Պատմահայրը Խոսրով Մեծից անմիջապէս յետոյ դնում է Արտաշիրի գահակալութիւնը (իրականում՝ Որմիզդ-Արտաշիրի - Բ. Յ.), Խորենացու 26+1 տարիների տեղողութիւնը սկսւում է 261 թ. եւ աւարտւում է 288 թ.: Յետոյ հազիւ թէ կարելի է մտածել, որ Սամուէլ Անեցին իր ձեռքի տակ այլ տուեալներ է ունեցել: Նա, ինչպէս եւ մենք, Արտաշիրի 26 տարիներին գումարել է Շապուհի մէկ տարին եւ ստացել 27:

III դարի վերջի ժամանակագրութիւնը կապւում է Տրդատ Գ-ի երկրորդ գահակալութեան եւ Գրիգոր Լուսաւորչի գործունէութեան հետ, որը սերտ աղերս ունի Մեծ Հայքում քրիստոնէութեան պետական կրօն հռչակման հետ, որը մենք քննութեան ենք առել առանձին ուսումնասիրութեան մէջ²⁵³:

251 Սամուէլի Քախանայի Անեցոյ Հաւաքմանը ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ-Ս. Էջմիածին, 1893, էջ 61
 252 Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. Բ, էջ 64
 253 Բ. Յարութիւնեան, Ե՞րբ է քրիստոնէութիւնը Հայաստանում հաստատուել պետական կրօն, էջ 131-228

250 Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. Բ, էջ 64

Zur Chronologie der Geschichte Armeniens in den II. und III. Jahrhunderten

Die Chronologie der Geschichte Armeniens in den II. und III. Jahrhunderten gehört zu den allermeist ungewissen Fragen der Armenologie, weil jeder Forscher infolge der bruchstückhaften Mitteilungen der bestehenden Quellen auf eigene Art und Weise diese Frage aufgeklärt und tatsächlich aufgrund der eigenen Interpretationen eine Chronologie aufgestellt hat. Von der unsererseits bereits erläuterten Tatsache ausgehend, dass Tiridates der Dritte im Jahre 288 (Handes Amsorya, 2006, S. 131-228) zum zweiten Mal den Thron bestiegen hat, sowie aufgrund der chronologischen Angaben von Movses Chorenatzi, die, wie es aus einer Überprüfung hervorkam, erstaunlicherweise mit den betreffenden Angaben der griechisch-römischen Quellen übereinstimmen, stellen wir die Chronologie der genannten Jahrhunderte in der nachstehenden Form wieder her.

In den Jahren:

- 76-110 König Sanatruk.
- 110 -113König Aschchadar.
- 113-114 König Parthamasir.
- 117-140/143 König Walarsch (Vologesos) der Erste.
- 140/143-148 König Tigran der Siebente.
- 148-161 König Tigran der Achte-Letzte (Sohemus) (Beim ersten Mal 14 Jahre).
- 161-163 König Bakur Arsachide.
- 164-191 König Tigran der Achte-Letzte (Sohemus) (Beim zweiten Mal 28 Jahre).
- 191-211 König Walarsch der Zweite (Das Römische Reich hat im Jahre 197 bzw. während der Herrschaftszeit von Walarsch dem Zweiten das Thronerbrecht der armenischen Arsachiden - Arsachuni - anerkannt).
- 211-259 König Chosrow der Große (oder Tiridates der Zweite).
- Chosrow der Große wurde 216 von dem Kaiser Caracalla festgenommen. Der ihm nachfolgende Kaiser Macrinus hat Chosrow den Großen (Tiridates den Zweiten) wieder freigelassen und ihm eine Krone gesandt. Es wurde zug-

- leich die Mutter des armenischen Königs freigelassen, und auch die aus Armenien geraubte Beute wurde zurückgegeben.
- 227 Die Sassaniden kamen in Persien an die Macht.
- 232-243 Chosrow der Große hat 11 Jahre lang gegen die Sassaniden gekämpft, indem er versuchte, in Persien wieder die Arsachiden an die Macht kommen zu lassen.
- 244 Der Kaiser Philippus Arab hat durch einen Vertrag das Königreich Großarmenien den Persern abgetreten (Der Vertrag wurde jedoch nicht erfüllt).
- 253 Unter dem persischen Druck zog Chosrow der Große in die westlichen Gebiete des Königreichs Großarmenien zurück.
- 253-256 Der persische Hof ließ Artawasd den Fünften in dem östlichen größeren Teil Großarmeniens den Thron besteigen.
- 256/257 Der König Chosrow der Große stellte seine Herrschaftsmacht auf dem ganzen Territorium Großarmeniens wieder her.
- 257 Der Persische Hof schickte Anak Arsachide zusammen mit seinem Bruder in das armenische Königreich, indem er ihnen den Auftrag erteilte, ihn zu ermorden.
- 259 Anak und sein Bruder ermordeten Chosrow den Großen, und auch sie beide wurden vom armenischen Heerr getötet.
- 259-261 Der König Artawasd der Fünfte bestieg wieder den armenischen Thron.
- 260 Während des Kriegs gegen die Perser wurde der Kaiser Valerianus gefangengenommen.
- 261 Der König Artawasd der Fünfte wurde vom persischen Hof entthront.
- 261-272 Der persische Hof lässt den Thronerben Wormisd-Artaschir in Großarmenien den Thron besteigen.
- 273-276 In Großarmenien thronte der Sohn von Wormisd-Artaschir Wormisdak.

274-276 Auf Befehl des Kaisers Aurelianus ließ Procopus Tiridates der Dritte im westlichen Teil Großarmeniens thronen (seit 274 bis 330 = 56 Jahre, wie bei Movses Chorenatzi).

276 Der König Tiridates der Dritte verließ zwangsweise seine Besitztümer, die von den Persern besetzt wurden.

276-293 In Großarmenien übernahm Nerseh Sassanide die Königsherrschaft.

288 Tiridates der Dritte thronte zum zweiten Mal im größten Teil des Territoriums Großarmeniens, während Nerseh den Thron im östlichen

Teil Großarmeniens weiter besaß (Die zweite Thronung von Tiridates ist nicht im dritten, sondern im fünften Herrschaftsjahr des Kaisers Diocletianus erfolgt). Movses Chorenatzi hält die 27jährige Sassanidenregierung in Großarmenien für eine fremde Herrschaft, die 261 begonnen und 288 zu Ende gekommen ist.

Die Chronologie der darauf folgenden Ereignisse haben wir bereits in unserem Aufsatz „Ueber das Datum des Christentums als Staatsreligion in Armenien“ recherchiert.

ԴՈՒԻՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՇՐՋԱԴԱՐՁԱՅԻՆ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ

Պայիսնէ Քոչարեան

Դուինը այն նշանաւոր հնամենի կենտրոններից է, որի հնագիտական շերտերում դրոշմուած է Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային զարգացման ընթացքը: Դուին-Դըւին-Դւին տեղանունը բխում է Հնե *d[h]eu- = «բնակավայր բարձունքի վրայ» իմաստային բանաձև-ւից¹: Դուին բազմաշերտ հնավայրը «բլուր-գետ-դաշտ» համալիրի սկզբունքով կազմուած «ամրոց-սրբավայր» էր՝

- մ.թ.ա. III հազարամեակում բլրի գագաթին կիկլոպեան ամրոց, ընտանեկան սրբարաններ.
- մ.թ.ա. I հազարամեակի սկզբում բլրի գագաթին ամրոց-սրբավայր, ստորոտին՝ տաճարախիտ սրբավայր, կից՝ դամբարանադաշտ.
- Արտաշիսեան շրջանում բլրի գագաթին, մ.թ.ա. Բ դ. կէսերին վերակառուցուած, Արտաշատի խոցելի հիւսիսային մատուցները հսկող «ամրոց-բնակավայր», ստորոտին՝ իր գործառոյթը շարունակող աւանդական սրբավայր.
- վաղ Արշակունեաց շրջանում (Բ դ. երկրորդ կէս, հռոմէական գրաւման տարիներ) բենեֆիցիարիուսների պատակէտ՝ բլրի գագաթին հրամանատարական դիտակէտ, ստորոտին՝ աւանդական սրբավայրում, ոստիկանական ուղեցոյց-ուղեկալ²:

Այստեղ աշխարհիկ եւ հոգեւոր իշխանութիւնների համատեղ տեւական գոյութիւնը պայմանաւորուած էր տեւալ հանգոյցի տեղագրական առաւելութեամբ: Երասխ-Մեծամօր-Ազատ գետերի ոռոգելի հովտում, հիւսիսային թիկունքից Տիկնուների բարձունքով, արեւմուտքից Ազատ գետով, արեւելքից Ուրծի լեռնաշղթայի բազուկներով ամփոփուած, բնակացից լաւ պաշտպանուած բլրի գագաթի ամրոցը՝

- գերիշխող բարձունքից մշտական տեսադաշտի մէջ էր պահուած Երասխի հովտով Արարատեան գոգաւորութիւն մտնող ուղիները.
- հսկում էր առեւտրական եւ ռազմավարական միջազգային կարեւորութեան տարանցիկ մայրուղիները:

Դուինի բազմադարեան պատմութեան մէջ կարեւորագոյն շրջադարձային հանգրուան է նրա արքայաճիւղ դառնալու պահը:

Նոսրով Կոտակ Արշակունու գահակալութեան տարիներին (330-338) Մեծ Հայքի թագաւորութիւնը դարձեալ յայտնուել էր Հռոմի եւ Պարսկաստանի առճանկատման կիզակէտում: Տարածաշրջանում կարեւոր գերտէրութիւնների սադրիչ գործունէութեամբ երկրում ձեւաւորուել էր ներքաղաքական ծայրայեղ անկայուն մթնոլորտ՝ պետական նոր կրօնի՝ քրիստոնէութեան դէմ ոտնձգութիւններ, միջնախարարական կռիւներ, արտաքին նենգա-

1 Գ. Քոչարեան, Դուին տեղանուն վաղեմութեան հարցը, «Լրաբեր հասարակական գիտութիւնների», 2000, թիւ 2, էջ 132-137:

2 Դուինի հնավայրն՝ ըստ Կ. Ղաֆադարեան, Դուին քաղաքը եւ նրա պեղումները, հտ. I, Եր., Դուին քաղաքը եւ նրա պեղումները, 1952, էջ 23-24, 60. A. Kalantarian, Dvin. Histoire et archéologie de la ville médiévale, Paris, 1996,

pp. 55-57; К. X. Кушнарева, Древнейшие памятники Двина, Ер. 1977, с. 7-42; Գ. Քոչարեան, Անտիկ Դուինը Արտաշատի պաշտպանական համակարգում, «Հանդես ամսօրեայ», 1996, թիւ 1-12, էջ 346-357. Առյճ, Դուինը վաղ Արշակունեաց շրջանում, «ՊԲՀ», 2002, թիւ 3, էջ 206-214: